

Մշակութային և Հասարակական
Երկարաթափերը
Ջոյն
1200 թուման
Հայաստանում 320 դրամ

Օ՛Ր ԲՆՈՒԹԻՒՆ, Օ՛Ր ՄԱՅՐ...



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Նոր Զուգայի թատրոնի պատմության հետքերով**
Նիկիտ Միրզայեանց
- 3 **ՀԱԿ-ն իր գորակցությունն է յայտնում ԲՀԿ-ին**
Նաիրա Գայրումեան
- 4 **Հայ Հասարակությունը Աւետեանի մահւան գործով արդար քննություն է պահանջում**
Նաիրա Գայրումեան
- 6 **ՀՀ նախկին դեսպանները «Փոթորկոտ կեանքիս օրերը» գրքի մասին**
- 14 **Գրիգոր Պըլտեանի «Մեմեր» վէպի մասին**
Նորվան
- 16 **Մեմեր (հատիած վէպից)**
Գրիգոր Պըլտեան
- 18 **Չանագան**
- 20 **Օլաֆ Հայէի վառ ծաղիկները**
- 22 **Ինքնասպանության պատճառ, պայման եւ առիթ**
Կամօ Վարդանեան
- 24 **Մարգանք**
Արման Տէր Ստեփանեան

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ սարի, քիւ126, Յուլիս 11, 2012,
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



- 8 **Օ Բնություն, Օ մայր**
Քարմէն Ազարեան
- 10 **Ովկիանոսը լույթին է խնդրում**
- 12 **Աժ նախագիծը կը կործանի Սեւանայ լիճը**


Պ ա ր ս կ ւ ե ր է ն ք ա ժ ի ն

- | | | | | | |
|---|--|---|---|----|--|
| 2 | Այս համարի պարսկերէն էջերում | 5 | Երկքաղաքացիությունը եւ Զաւախքը | 8 | Մերունի պատկերազարդումները |
| 4 | Ղարաբաղ՝ Ընտրություններ, բանակցություններ
Թուրաջ Խոսրուի | 6 | Յուշեր ծննդավայրից՝ Աբաղանի «Նախլետթան»-ը
Ալվարդ Թորոսեան | 11 | «Ուղեւորություն դէպի Արարատ» գրքից հատւածներ
Մայքըլ Արլէն (կրտսեր) |

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
--	---	---	---

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇԵՔԵՐՈՎ

Նիկիտ Միրզայեանց



Նոր Զուղան իր 125-ամեայ թատրոնի անցելով (1887-2012) ըստ արժանաւոյնս չի գնահատել եւ չի նկատել իր տաղանդաւոր եւ վաստակաշատ անձերից ոմանց, վկան «Նոր Զուղայի թատրոնը» միակ գիրքը, Լ. Գ. Մինասեանի հեղինակութեամբ:

Այստեղ իմ պարտքն են համարում ներկայացնել եւս երեք անձանց Մայքլ Աղաջանեանին, Դովիկ Ալլահվերդեանին եւ Գրիգոր Դաւթեանին, որոնք իրենց թատերական վաստակով մեծ ներդրում են ունեցել մեր մշակոյթի զարգացման գործում, որը հերթաբար կանդորադառնամ նրանց մօտ ապագայում:

Երեւի, այս յօդածաշարով կարողանանք մեր գնահատանքի խօսքն ասել եւ նրանց սիրտը սփոփել որպէսզի «ազգային» ամօթխածութիւն չզգանք:

Եթէ խօսում ենք մեր մշակոյթից, եւ ազգային արժանապատւութիւն ենք քարոզում, ուրեմն եկէք մեծարենք մեր անխոնջ մշակներին իրենց կենդանութեան օրօք, այս հրամայականով էլ սկսենք Մայքլ Աղաջանեանից, որը 1950-ից 60 թւականները Զուղան ապրեցրել է իր թատրոնով եւ Դայոց Քլուբում «ակումբում» չարմահալցու, փերեցու, եւ ջուղայեցու բարբառով «լոտո» կարդալիս, ժողովրդին վարակիչ ծիծաղ է պարգեւել իր երգիծանքով ու հումորով, մի անձնաւորութիւն, որը սիրւած է եղել ժողովրդի կողմից եւ ճանաչւած որպէս «կրակոտ չարմահալցի», հիմա արդէն իսկ նա ամիսներ է, ինչ կորցնելով իր կնոջը Օֆիկ Վանոյին, 80 տարե-

կան հասակում մեմակեաց կեանք է վարում Թեհրան քաղաքում եւ միսիթարում միայն իր զաւակներով եւ թոռներով:

Այսպիսով էլ հայ թատրոնի անխոնջ հետազօտող, Բախտիար Յովակիմեանն է անդրադարձել նրա թատերական կեանքին ու վաստակին, եւ վաւերագրել իր կնիքով:

Յունիս 2012
Նոր Զուղա

Աղաջանեան Մայքլ Օհանի (ծնւ.20.2.1932 Նոր Զուղա) դէրասան, դրամատուրգ:

Սովորել է Նոր Զուղայի Դայոց ազգային դպրոցում: Աշակերտական տարիներից մասնակցել է դպրոցական հանդէսների ժամանակ տրւած ներկայացումներին: Առաջին դերը խաղացել է պարսկերէն, կատարելով բանաստեղծի դերը դրամատուրգ եւ բեմադրիչ Նեզամ Վաֆայի «Բանաստեղծն ու նկարիչը» պիեսի բեմադրութեան մէջ եւ արժանացել ներկաների ուշադրութեանը:

Թատերական արւեստի նկատմամբ սերը նրան մօտեցրել է Նոր Զուղա հիւրախաղերի եկած անլանի բեմական գործիչներ Մ.Մարութեանի, Ռուբէն եւ Լիդա Աթայեանների եւ ուրիշների հետ, հետաքրքրել նրանց արւեստով, հետեւել նրանց խաղին, մասնակցել նրանց ներկայացումներին:

1950-1960-ական թթ. Աղաջանեանը թէ խաղացել է թատրոնում եւ թէ պիեսներ գրել նրա համար: Խ.Մարգարեանների բեմադրութիւններում նա կատարել է Մինասի («Մարտիկ ճրագներ»,1953), Ծիպլի Ծատուրի («Նամուս»,1958) եւ այլ կատակերգական ու բնութագրական դերեր: Ազգաւի դերով ելոյթ է ունեցել Նիկոլ Գալանդերեանի ղեկավարութեամբ տրւած «Չարի վերջը» օպերետում:


Աղաջանեանի գրած առաջին պիեսը՝ «Մարիթա Ալֆայեան» 3 գործ. դրաման 1955-ին բեմադրւել է Նոր Զուղայի թատրոնում յօգուտ Փերիայի հիւանդանոցի կանանց օժանդակ միութեան: Նրա գրչին են պատկանում նաեւ «Շեղւած ճամբի գոհերը» (դրամա 3 գործ.), «Քաղցածները» (կատակ.1 գործ.) եւ այլ փոքր գործեր, որոնք պատկերում են մերօրեայ կեանքի յուզող հարցերը:

Փոխադրւելով Թեհրան՝ թողել է բեմն ու թատրոնը:

Բ.Յովակիմեան
6.6.2010

ՀԱԿ-Ե ԻՐ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆՆ Է ՅԱՅՏԱՌԻՄ ԲՀԿ-ԻՆ ԵՒ ՊԱՏ-ՐԱՍՏԻՌԻՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Նաիրա Հայրունեան



Յունիսի 26-ի երեկոյեան անցկացած Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) հանրահաւաքը, դատելով ընդդիմադիր դաշինքի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթից, «Բարգաւած Հայաստան» կուսակցութեանը (ԲՀԿ) սատարելու նպատակ էր հետապնդում:

ՀԱԿ-ի առաջնորդն ասել է, որ թերահաւատների նախընտրական սպասումները չարդարացան, եւ ԲՀԿ-ն ամբողջովին համագործակցել է ընդդիմութեան հետ: Ընդ որում, նա նշել է, որ նոյնիսկ դրանից յետոյ շատերը փորձում են կասկածներ սերմանել՝ մէկ յայտարարելով, թէ իբր ԲՀԿ-ի յետեւից երեւում են նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանի «ականջները», մէկ էլ փորձելով համոզել, թէ ԲՀԿ-ն ընդդիմութիւնն է:

Տէր-Պետրոսեանը ջանք չէր խնայում համոզելու հաւաքածոներին, որ ԲՀԿ-ն իսկական ընդդիմութիւնն է, այլ ոչ թէ «իշխանութեան այլընտրանք», ինչպէս իրենք են իրենց «անյաջող» անւանել: Իսկ նրանց, ովքեր հակառակն են պնդում, նա մեղադրեց նրանում, որ նրանք փորձում են վերականգնել իշխանական մոնոլիտը եւ վերադարձնել ԲՀԿ-ին Հանրապետական

կուսակցութեան (ՀՀԿ) կցորդի կարգավիճակը: Տէր-Պետրոսեանը յայտարարել է, որ Քոչարեանի վերադարձով հասարակութեանը մշտապէս վախեցնելը մէկ նպատակ է հետապնդում՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին ներկայացնել որպէս չարեաց փոքրագոյն, քանի որ նման վտանգ իրականում չկայ, ու Քոչարեանն ինքը մահու չափ վախեցած է Հոկտեմբերի 27-ի (խորհրդարանի վրայ զինւած յարձակման հետեւանքով ութ բարձրաստիճան քաղաքական գործիչներ զոհուեցին) եւ Մարտի 1-ի (2008-ի յետընտրական բախումներին զոհ գնաց 10 մարդ) դէպքերով: Դեռեւս հանրահաւաքից առաջ «Ժամանակ» թերթում ենթադրութիւն էր արւել, թէ ՀԱԿ-ը կարող է միանալ ԲՀԿ-ին եւ 2013 թ. նախագահական ընտրութիւններում սատարել նախկին արտգործնախարար, ԲՀԿ պատգամաւոր Վարդան Օսկանեանին: Այդ կարծիքին թերթը յանգել էր ԲՀԿ-ի նկատմամբ Կոնգրեսի դրսեւորած շարունակական աջակցութեան պատճառով: Թէեւ իրականում ԲՀԿ-ի հետ համագործակցելու եւ Օսկանեանին սատարելու առումով Կոնգրեսում իսկ տարածայնութիւններ կան: Հանրահաւաքի ընթացքում

Տէր-Պետրոսեանը նշել է, որ ԲՀԿ-ին կրկին իր կցորդը դարձնելու համար իշխանութիւններն արդեն սկսել են կիրառել հարկային եւ այլ ճնշումներ՝ հաւանաբար նկատի ունենալով Օսկանեանի հիմնած «Սիվիլիթաս» հիմնադրամի դէմ փողերի լւացման մեղադրանքով յարուցած գործը: Ուշագրաւ է, որ ՀԱԿ-ը ներկայացնող պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը երկու անգամ հրապարակել է յօդւածներ, որոնցում յայտարարել է, որ եթէ դատախազութիւնը դիմի խորհրդարան՝ պահանջելով զրկել Օսկանեանին պատգամաւորական անձեռնմխելիութիւնից, ապա ինքը «կողմ» կը քվէարկի, թէկուզ այն բանի համար, որ մատնանշի Օսկանեանի պատասխանատուութիւնը մարտիմէկեան դէպքերի համար: Այդուհանդերձ, Կոնգրեսի առաջնորդի մակարդակով յայտարարել է, որ ԲՀԿ-ն պետք է կարողանայ յաղթահարել ճնշումը: Տէր-Պետրոսեանի կարծիքով՝ եթէ կուսակցութիւնը հնազանդութիւն յայտնի Սերժ Սարգսեանին, ապա դա կը լինի նրա՝ որպէս քաղաքական գործօնի վերջը:

Աղբիւր՝ ԱրմենիաՆաու

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱԵՏԵԱՆԻ ԴԱԺԱՆ ՄԱՀԻԱՆ ԳՈՐԾՈՎ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹԻՒՆ Է ԴԱՀԱՆՋՈՒՄ

Նաիրա Հայրունեան

Շաբաթ լոյս կիրակի գիշերը (Յուլիսի 1) 39-ամեայ փոխգնդապետ Վարդան Սամելեանը 600 գրամ տրոտիլով, ձեռքի նռնակներով եւ դանակով զինուած մտել է «Հարսնաքար» ռեստորանային համալիր եւ սպառնացել, թէ կը պայթեցնի: Սամելեանը չի իրականացրել իր սպառնալիքը, փոխարէնը համալիր մտնելուց երեք ժամ անց յանձնուել է ոստիկանութեանը:

«Հարսնաքար»-ի անվտանգութեան աշխատակիցների կողմից դաժան ծեծի հետեւանքով այդպէս էլ զիտակցութեան չէկած եւ հիւանդանոցում Յունիսի 29-ին մահացած զինուորական բժիշկ Վահէ Աւետեանի յիշատակի մոմավառութեան արարողութիւնից մի քանի ժամ անց Սամելեանը ձերբակալուել է: Օլիգարխ-պատգամաւոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբէն Հայրապետեանին պատկանող Երեւանի «Հարսնաքար» ռեստորանում Յունիսի 17-ին տեղի ունեցած միջադէպը ցնցեց ողջ երկիրը: Երկու երեխաների հայր, 33-ամեայ Աւետեանից բացի ծեծի էին ենթարկուել նաեւ իր գործընկեր չորս զինուորական բժիշկները՝ Էդգար Միկոյեանը, Արկաղի Աղաջանեանը, Գարիկ Սողոմոնեանը, Արտակ Բայաղեանը, որոնք նոյնպէս հիւանդանոց էին տեղափոխուել, սակայն նրանց վերքերը կեանքին վտանգ չէին ներկայացնում: Ըստ պաշտօնական վարկածի, անվտանգութեան աշխակիցների եւ ռազմական բժիշկների միջեւ վէճի պատճառ է եղել ռեստորան անհամապատասխան՝ մարզական հագուստով ներկայանալը: Հայրապետեանը, ըստ ՋԼՄ-ների տուեալների, կարգադ-



րել է «դաս տալ» ռեստորանում հանգստացող բժիշկների խմբին: Հասարակական բողոքը սկսուել էր դեռ մինչեւ երիտասարդ բժշկի մահը: Սոցիալական ցանցերում կոչ էր արւում բոյկոտել «Հարսնաքար» ռեստորանը, սկսել բողոքի ակցիաներ՝ պահանջելով զրկել Հայրապետեանին պատգամաւորի լիազօրութիւններից եւ անձեռնմխելիութիւնից: Շատերն այդ օրը ցոյցի էին դուրս եկել «Ես Վահէ Աւետեանն եմ» պաստառներով: Բժշկի մահից յետոյ սոցիալական ցանցերի էջերից բողոքները դուրս յորդեցին փողոց: Յունիսի 30-ին շուրջ 2000 մարդ լուռ, ջահերով բողոքի ակցիա անցկացրեց «Հարսնաքար» ռեստորանի մօտ, որտեղ այդ ժամանակ հարսանեաց հանդէս էր: Յաջորդ օրը բողոքի ակցիա անցկացուեց նախագահական նստավայրի մօտ, որտեղից մասնակիցներն ուղղուեցին դէպի կառավարութեան եւ գլխաւոր դատախազութեան շէնքեր: Իսկ երեկոյեան արդէն բազմաթիւ քաղաքացիներ մասնակցեցին Աւետեանի քաղաքա-

ցիական հոգեհանգստին: Նախագահական նստավայրի մօտ հաւաքածների մէջ էին հասարակական-քաղաքական գործիչներ, մասնաւորապէս «Ժառանգութիւն», ՀՅԴ, «Ազատ դեմոկրատներ» կուսակցութիւնների, ինչպէս նաեւ Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչներ, ակտիւիստներ, բնապահպաններ, շարքային քաղաքացիներ: Նրանց ձեռքերում տարբեր կոչերով պաստառներ էին, որոնց մէջ գերակշռում էին օլիգարխիայի լուծը թօթափելու կոչերը: Հայ ազգային կոնգրեսի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը մշտելով, որ ամէն ինչում մեղաւոր է Հայաստանի յանցաւոր ռեժիմը, ասել է, որ Ռուբէն Հայրապետեանը չի կարող իր գործընկերը համարել խորհրդարանում: Նման դէպքերից խուսափելու համար անհրաժեշտ է հասնել յանցաւոր ռեժիմի տապալմանը եւ Սերժ Սարգսեանի հրաժարականին: «Վահէն իր մահով մարտահրաւէր նետեց ողջ մեր քաղաքացիներին՝ շարունակուելու ենք մնալ

ստրուկ, թե՞ սա առիթ է, որ բոլորս մեկ մարդու նման ոտքի կանգնենք ու ասենք՝ այլևս նման բան չի լինելու, - «Ազատութիւն» ռադի-



Ռուբեն Հայրապետեան՝ ԱԺ պատգամաւոր, «Հարսնաքար» ռեստորանի սեփականատէր

օկայանի հետ զրոյցում շաբաթ ասել է նախաձեռնութեան անդամ Դաւիթ Սանասարեանը: - [Վահէին ծեծողները] «Հարսնաքար»-ի անվտանգութեան աշխատակիցները չեն եղել, այլ եղել են հէնց Ռուբեն Հայրապետեանի թիկնազօրի անդամները... Նորմալ երկրում Ռուբեն Հայրապետեանը պէտք է ամէն օր հարցաքննուէր»: Tert.am-ի թղթակիցը իրավիճակը մեկնաբանելու խնդրանքով դիմել էր Ռուբեն Հայրապետեանին, որը Յուլիսի 1-ին նախագահ Սարգսեանի հետ մեկնել է Կիւն դիտելու «Եվրօ-2012»-ի եզրափակիչ հանդիպումը: Tert.am-ի հետ զրոյցում նա ասել է. «Ուզում էք ասեն, որ բոլոր մեղաւորները կը պատժուեն. իհարկէ կը պատժուեն, օրէնքի ողջ խստութեամբ կը պատժուեն: Բայց ի՞նչ դրանից, կը վերադարձնենք Վահէին, իհարկէ չենք կարող: Ի՞նչ պիտի ասեն նրա ընտանիքին: Դուք չէք կարող պատկերացնել իմ ապրումները»: «Հարսնաքար»-ում տեղի ունեցած միջադէպի առնչութեամբ Յունիսի 30-ին բողոքի ակցիա է անցկացուել նաեւ Լոս Անջելէսում:

Ակցիայի մասնակիցները կոչ են արել պատժել բոլոր մեղաւորներին:

Օրեր առաջ «Հարսնաքար» ռեստորանում դաժան ծեծկռտութի հետեւանքով զինուորական բժշկի մահուան առնչութեամբ երեսնում կազմակերպող բողոքի ակցիաները շարունակուում են նաեւ երկուշաբթի, Յուլիսի 2-ին՝ նրա թաղման օրը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԸ ՎԱՅՐ ԴՐԵՑ ԴԱՏԱՍՍԱՌԻ ՄՆԴԱՍԸ

Մինչ պատգամաւորի մանդատից հրաժարուելու մասին յայտարարելը Ռուբեն Հայրապետեանը հանդիպում է ունեցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ:

Իր յայտարարութիւն մէջ Ռուբեն Հայրապետեանը նշել է.

«Ամէն ինչ կը տայի, որ այդ չարաբաստիկ երեկոյեան լինէի այնտեղ, բռնէի երիտասարդների վրայ բարձրացող բռունցքները, կանգնեցնէի այս դժբախտութիւնը, որ կեանք խլեց, ընտանիքներ կործանեց, երեխաներ որբացրեց: Ամէն ինչ կը տայի այս ամէնը յետ պտտելու համար: Բայց չեն կարող: Վահէն արդէն չկայ: Ու ես դրանով պէտք է ապրեմ: Ու պէտք է նայեմ նրա ընտանիքի անդամների աչքերին: Չգիտեմ ոնց:

Ասում են՝ ամէն ինչ օրէնքով պիտի լինի. վստահ եմ օրէնքով կը լինի, 100 մեղաւոր կը լինի, 100 պատիժ կը լինի: Բայց հարցը միայն օրէնքը չի»:

«ՆԵՄԵ՛Ց ՉԵՆԱՅԻ՛Ր» ԶԱՂԱՔԱՅԻՆՎԱՆ ԱՎՏԻԻՍՏՆԵՐԸ ՃԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԸ ԶԻՆՎԱՆ ԴԱՏԱՍՍԱՆԱՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԻ

Յուլիսի 2-ին Ազգային ժողովի դիմաց հաւաքուած մօտ 500 քաղաքացի երթով զնաց դէպի գլխաւոր դատախազութեան շէնք՝ պահանջելով դաժան ծեծի (Յունիսի 17-ին) հետեւանքով Յունիսի

29-ին մահացած զինուորական բժիշկ Վահէ Աւետեանի մահուան գործով արդար քննութիւն, ինչպէս նաեւ քրեական պատասխանատութեան ենթարկել ԱԺ հանրապետական պատգամաւոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (ՀՖՖ) նախագահ Ռուբեն Հայրապետեանին՝ նրա մանդատից հրաժարուելու փաստը համարելով չնչին քայլ: (Հայրապետեանը պատգամաւորի իր մանդատը վայր է դրել երեքշաբթի:)

Այն պահին, երբ հաւաքուածները վանկարկում էին «Նեմեց Ռուբօն վտանգաւոր է հասարակական առողջութեան համար», «Նեմեց, հեռացիր», խորհրդարանում էլոյթ էր ունենում երեսնում գտնուող Եւրոպայի խորհրդի նախագահ Շերման վան Ռոմպէյը, որը խօսելով Հայաստանի եւրախմտեգրման մասին, կոչ էր անում իշխանութիւններին ձեռնարկել մի շարք քայլեր՝ հաշիկ նստելով քաղաքացիական հասարակութեան կարծիքի հետ:

Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ) խմբակցութիւնից Արամ Մանուկեանն ասաց, որ խորհրդարանական չորս խմբակցութիւնների՝ ՀՀԴ-ի, ՀԱԿ-ի, «Ժառանգութիւն»-ի, «Բարգաւաճ Հայաստան»-ի (ԲՀԿ) ղեկավարների ստորագրութեամբ պաշտօնապէս դիմում են փոխանցել ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանին, որով առաջարկում են սեղմ ժամկետներում ԱԺ-ում հանդիպում կազմակերպել «Հարսնաքար»-ի գործի քննութեան համար պատասխանատու իրաւապահ մարմինների ղեկավարների հետ: ԱԺ ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանն էլ փոխանցեց, որ այս պահին չունեն օրէնքով պահանջող 44 պատգամաւորների ստորագրութիւնները, ինչը անհրաժեշտ է արտահերթ միստ գումարելու համար:

Աղբիւր՝ «ԱրմենիաՆաու»

ՄԵԾ ՅՈՒՉՈՒՄՈՎ ԿԱՐԴԱՅԻ ԳԻՐՔԸ.....

Վահան Բայրուրդեան

Օգտւելով ինձ ընծեւած հնարաւորութիւնից, ցանկանում եմ նախ սրտանց շնորհաւորել իմ վաղեմի ու պատուարժան բարեկամ Լեւոն Ահարոնեանին իր «Փոթորկոտ կեանքիս օրերը» երկու ստաւարածաւալ հատորներից բաղկացած յուշագրութեան շնորհանդէսի կապակցութեամբ:

Ես անշուշտ գիտէի, որ Լեւոնը տաղանդաւոր գործարար լինելուց բացի՝ նաեւ գրոց եւ բրոց մարդ է, հրատարակել է գրքեր, կատարել թարգմանութիւններ, մամուլում հանդէս ելել ուշագրաւ յօդածներով եւ այլն: Գիտէի նաեւ, որ լինելով պրագմատիկ, նա միաժամանակ բանաստեղծական ոգու տէր մարդ է: Բայց որ նա օժտուած է գրողի յուժկու տաղանդով, իմ մտքով բոլորովին չէր անցնում: Անկասկած «Փոթորկոտ կեանքիս օրերը» ուշագրաւ երեւոյթ է հայ յուշագրական գրականութեան մէջ: Դա, ըստ էութեան, ոչ թէ մէկ մարդու կենսագրութեան ընդարձակ շարադրանք է, այլևս Իրանի քաղաքական իրադարձութիւններին, Իրան-Յայաստան առնչութիւններին, Իրանի հայ գաղթօջախի նորագոյն պատմութեանը եւ բազում այլ հարցերի նկիրւած եւ տաղանդաւոր գրչով շարադրւած մի հիանալի տարեգրութիւն:

Յիանալի, Լեւոն Ահարոնեանը դրսևորել է ոչ միայն գրողի տաղանդ, այլևս լայնախոհ մտածողի, փայլուն վերլուծաբանի, Իրանի իրադարձութիւնների հիանալի ու խորագետ մեկնաբանի շնորհ: Ինձ առհասարակ միշտ զարմացրել է Լեւոնի, այդ խելօք եւ ուժեղ անհատականութեամբ աչքի ընկնող մարդու եռանդը: Մօտիկից ճանաչելով նրան, ես կարող եմ վկայել,

որ նա իսկապէս ապրել է փոթորկայոյզ կեանքով: Ինչպէս որ պողպատն եմ կոփում կրակի եւ ջրի օգնութեամբ, այնպէս էլ Ահարոնեանն է կոփւել դժարութիւնների ու փորձութիւնների բովում, ի վերջոյ դառնալով ուժեղ անհատականութիւն:

Իրանի Իսլամական Յանրապետութիւնում իմ պաշտօնավարութեան տարիներին ես բախտ եմ ունեցել տեւական ժամանակաշրջանի ընթացքում շփուել Ահարոնեանների պատական ընտանիքի հետ, վայելել Լեւոն Ահարոնեանի ազնւափայլ տիկնոջ՝ Բելլա Ահարոնեանի, այդ բարի ու խելացի կնոջ հիւրասիրութիւնը:

Խոստովանում եմ, որ Լեւոն Ահարոնեանը իմ կեանքի ճանապարհին հանդիպած ամենահետաքրքիր մարդկանցից մէկն է: Ծնւելով հայրենիքից դուրս եւ իր կեանքի մեծագոյն մասն անցկացնելով Իրանում, նա միշտ ապրել է հայրենիքի հոգսերով: Եւ բնաւ պատահական չէ, որ նա բոլոր գործերի մէջ, այդ թւում նաեւ նրա յուշագրութիւնում, տրոփում է ազգային ոգու զարկերակը: Գուցէ դա նաեւ նրանից է, որ աշխարագրականօրէն ամենամօտը լինելով հայրենիքին, իրանահայութիւնը միշտ էլ աւելի մօտիկից է զգացել հայրենիքի սրտի ջերմ տրոփիւնը:


Յիրաւի, Լեւոն Ահարոնեանը սփիւռքի մեր այն եղբայրներից է, որը պատրաստ է հայրենիքի խորանին դնելու այն բոլոր լաւը, ինչ ունի իր մէջ: Նա այն մարդկանցից է, որ յստակ գիտակցում է, որ ժողովուրդն ապրում է իր հայրենիքով, ինչպէս ծառը իր արմատներով: Ուստի ամէն մի հայ, աշխարհի որ ծագում էլ որ ապրի, մշտապէս

պէտք է լսի հայրենիքի հողի ձայնը եւ մեր ժողովրդի շինարար ոգու պայծառակերպումը: Լեւոն Ահարոնեանի համար Յայաստանն ու հայոց պետականութիւնը իսկապէս ներշնչման աղբիւր են:

Ահարոնեանը նաեւ կենդանի մարմնացումն է այն մտայնութեան, որ այսօր երբ մեր պետականութիւնը կանգնել է հաստատուն հիմքերի վրայ, մենք պարտաւոր ենք ժողովուրդ լինելու հոգեբանութիւնից անցնել պետական ազգ լինելու հոգեբանութեան: Լեւոն Ահարոնեանի համար Յայաստանը վերին սրբութիւնն է եւ նրան ծառայելը՝ պարտականութիւններից գերագոյնը: Սա է այդ հայորդու հաւատոյ հանգանակը:

Լեւոնը նաեւ այն մարդկանցից է, որը միշտ կենդանի գործը գերադասում է վերացական դատողութիւններից: Նա որպէս բարերար, մշտապէս անվիատ հետեւողականութեամբ, միջոցներ ու ձեւեր է գտնում թէ՛ հայրենիքում, եւ թէ՛ սփիւռքում հայ մարդկանց օգտակար լինելու համար: Ինձ միշտ յուզել է այն հարցը, թէ ո՞րն է Լեւոն Ահարոնեանի բարերարութեան ոգու արմատը: Արդեօք քրիստոնէական գո՞ւթը, թէ՞ պարզ մարդասիրութիւնը, ծնողներից ժառանգած մեծահոգութիւնը, թէ՞ հայասիրութիւնը, մեր ժողովրդի ենթագիտակցութեան խորը անկիւններում թաքնւած այն բնա՞ղղը, որ հայը, աւելի քան որեւէ այլ ժողովուրդ, պէտք է օգնի հային, ձեռք մեկնի նրան: Գուցէ մեր ժողովրդի գոյութեան առեղծւածը հէնց դա է՝ փրկել բարգաւաճել է հեճուկս ճակատագրի բոլոր քմահաճոյքների: Կարծես Աստուածաշնչում հայերի մասին է ասուած. «Նրանք թեքեցան եւ վայր ընկան, բայց մենք վեր կացանք եւ կանգնեցինք»:

Մեզանից երկար ժամանակ կը խլէր մէկ առ մէկ թւարկելու Լեւոն



ՅՈՒՆԱՐՁԱՆ՝ ՀԱՐԱՉԱՏՆԵՐԻ ԱՆՄԱՐ ՅԻՇԱՏԿԻՆ

Գեղամ Ղարիբջանեան

Ահարոնեանի իրականացրած բարեգործական բոլոր ձեռնարկումները: Նա մերթ դպրոցաշինարար է, մանկապարտէզի շէնք կառուցող, մերթ մշակութային օջախի հիմնադիր, մերթ թանգարան ստեղծող, մերթ գրքերի մեկենաս, մերթ որբ երեխաների կարիքները հոգացող գթառատ մարդ, մերթ տաղանդաւոր հայ երեխաների ուսման հովանաւոր, մերթ կրթօջախ վերանորոգող: Այս թւարկումը կարելի է անվերջ շարունակել:

Լեւոն Ահարոնեանը սփիւռքի մեր այն հայրենակիցներից է, որ Հայաստանում աւերիչ երկրաշարժի ժամանակ գործի լծեցին իրենց վիրաւոր ժողովրդին եղբայրական օգնութիւն ցուցաբերելու համար: Իրանի հետ մեր յարաբերութիւնների սկզբնաւորման օրերին միանգամայն ակնյայտ էր որ հայ-իրանական առեւտրատնտեսական յարաբերութիւնների ծաւալման համար անհրաժեշտ էր Արաքս գետի վրայ կառուցել Հայաստանն Իրանի հետ կապող կամուրջ: Նրա գոյութիւնն անհրաժեշտ էր նաեւ Հայաստանի ցամաքային ճանապարհների շրջափակումը ճեղքելու եւ դէպի արտաքին աշխարհ դուրս գալու կենսական նշանակութիւն ունեցող խնդիրը լուծելու համար:

Ջերմ մակագրութիւնով հաստափոր երկհատորեակը ստանալիս, անկեղծ ասած, առաջին տպաւորութիւնս այն էր, որ դրանք տեղ կը գտնեն Բիւրականի ամառանոցային գրապահարաններումս:

Բացեցի առաջին էջը եւ այլեւս չկտրուեցի միւթից: Անհաւատալի է, բայց մէկ շնչով, մի քանի օր շարունակ, յափշտակած կարդում էի Լեւոն Ահարոնեանի, այդ իսկապէս իւրայատուկ անձնաւորութեան հեղինակած «Փոթորկոտ կեանքի օրերը» մենագրութիւնը: Այն ոչ միայն հետաքրքիր է անձնական կեանքի զանազան դրւագների յիշատակումով, այլ նաեւ Իրանի անցեալ դարի պատմութեան հարուստ փաստերով:

Յատկապէս ուշագրաւ են Իրանի իսլամական յեղափոխութեան օրերին հայ համայնքի, թեմական խորհրդի, այդ իսկապէս բարդ օրերին պարոն Ահարոնեանը երկար տարիներ Թեհրանի թեմական խորհրդի ատենապետն էր, կեցւածքի, դժւարութիւնների եւ ձեռք բերումների մասին պատմող

Լեւոն Ահարոնեանը դարձաւ ոչ միայն այդ գործի նախածեռնողներից, այլեւ եռանդուն մասնակիցներից մէկը: Արխիւում կայ մի պատմական լուսանկար, որտեղ ի թիւս մի խումբ մարդկանց, որոնք ընտրում են կամուրջը կառուցելու համար յարմար վայր, գտնուում է նաեւ Լեւոնը: Այնուհետեւ, հէնց ինքը՝ Ահարոնեանն էր, որ Իրանի հետ Հայաստանի առեւտրատնտեսական յարաբերութիւնները խթանելու նպատակով նախածեռնեց «Իրան-Հայաստան» առեւտրական պալատի ստեղծմանը: Դժւար է զերագնահատել նաեւ այն իսկայա-

յիշատակումները:

Յիշում են անցեալ դարի եօթանասունականներին Թեհրանի Փահլաւի պողոտայում իր հայրիկի «Անդրէ» խանութը, որի ստեղծման մասին հետաքրքիր մեկնաբանութիւններից զատ պարոն Ահարոնեանը կարողացել է ներկայացնել իրենց ընտանիքի անցած ամբողջ ճանապարհը: Մի ընտանիքի պատմութիւն, որ դժւարութիւնները յաղթահարելու ամուր կամքով օրինակ է շատերի համար:

Կաղնու պէս ամուր, իսկապէս խորը արմատներով, հայրենասէր, Հայ Առաքելական Ս. Եկեղեցու հաւատաւոր զաւակ, հիանալի ամուսնու եւ հօր համար տապալող հարած էր իր սիրելի դստեր՝ Անետի եւ հիասքանչ տիկնոջ՝ Բելլայի անժամանակ կորուստը, բայց կամքի գերբնական ուժով Լեւոն Ահարոնեանը կարողացաւ մնալ կանգուն:

Եւ այս երկհատորեակը յուշարձան է իր հարազատների անմար յիշատակին:

կան դերը, որ խաղում է Ահարոնեանի միջազգային բեռնափոխադրումների «Սաթի» ընկերութիւնը հայ-իրանական առեւտրատնտեսական յարաբերութիւններում:

Լեւոն Ահարոնեանը Իրանում նաեւ ճանաչւած, յարգւած եւ եռանդուն հասարակական գործիչ է: Նա իր աջակցութիւնն է բերել Իրանի հայկական մշակութային հիմնարկութիւնների պահպանմանն ու զարգացմանը:

Խոստովանում են, որ ես մեծ յուզմունքով կարդացի Լեւոնի հիանալի աշխատութիւնը:

Օ՝ ԲՆՈՒԹԻՒՆ,

Քարմէն Ագարեան

ՄԱՅՐ ԲՆՈՒԹԻՒՆԸ, ՈՐԸ ՄԻԼԻՈՆԱՒՈՐ ՏԱՐԻՆԵՐ ՄԻՇՏ ԻՐ ԳՐԿՈՒՄ ՓԱՅՓԱՅԵԼ ՈՒ ԳՈՒՐԳՈՒՐԵԼ Է ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԻՆ, ԱՍԵՍ, ԱՅՍՕՐ ԶԱՅՐՈՅԹԻՉ ԿՐԱԿ Է ԹԱՓՈՒՄ ՆՐԱ ԳԼԽԻՆ

Վերջին տարիներին բնութեանը, բնական աղէտների ու ոչ բնական երեւոյթներին վերաբերող լուրերը օր-օրի աւելանում ու աննախադէպ են դառնում: Խոշոր ու անժամանակ կարկուտների տարափից սկսած մինչեւ սարսափելի ցունամիներ ու նոյնիսկ անմեղ կետերի ու դէֆինների զանգւածային «ինքնասպանութիւններ»: Իրօք, ահասարսուռ են այս կարգի լուրերը: Մայր բնութիւնը,

որը միլիոնաւոր տարիներ միշտ իր գրկում փայփայել ու գուրգուրել է մարդ արարածին, ասես, այսօր զայրոյթից կրակ է թափում նրա գլխին: Աւելի խորը հետեւելով երկիր մոլորակի բնակլիմայական հետազօտութիւններին, զգում ես թէ ինչպէս մարդն իր ձեռած իսկ, առանց վարանելու եւ առանց թերեւս իր թռների ու նրանց թռ ու ծռների համար մի պահ մտահոգւելու, նրանց թող-

նում է իրեն յանձնւած բնութեան աւերակները:

Պէտք չէ այնքան էլ մասնագէտ լինել, որ հասկանալ թէ ինչպէս է անտառների ու ջրաւազանների ոչնչացման հետեւանքով բարձրանում աւազէ մրրիկներն ու երկրից երկիր անարգել տարածւում, կամ թէ այն պահին, որ անսպասելի տեղատարափը հեղեղի վերածւած ոչնչացնում է մարդկանց ու անմեղ կենդանիների բնակա-

Վերջին տարիներին աւելի յաճախակի են դարձել աւերիչ ցունամիները:

Ենթադրում է, որ դա կապւած է օզոնի շերտի նոսրացման հետ:



Օ՛՛ ՄԱՅՐ...



վայրերը, իսկ մի քիչ այն կողմ չոր ու ցամաք մնացած հազարաւոր եւ գուցէ միլիոնաւոր տարիների ընթացքում աճած խիտ անտառները հրդեհի մատնուում ու ոչնչանում են: Բնութեան իւրաքանչիւր մասնիկը անմասն չի մնում այս աւերումից. Բեւեռային սառցաբեկորները հալչում ու բարձրանում է ովկիանոսների ջրի մակարդակը, որով ինչ-որ ցամաքամասեր ջրի տակ են մտնում, քարտէզներից անհետ կորչում են էկոսիստեմներ, բուսական ու կենդանական տեսակներ, եւ նոյնիսկ երկր-

ներ: Եւ այսպէս անվերջանալի ու ահաւոր տխուր պատկեր, որին ականատես խելացի ու բանական մարդը, թւում է, վտանգի մեծութիւնը զգալով, պիտի անյապաղ գործի անցներ, եւ ինչքան շուտ կանխելով այդ բոլորը, փրկէր Մայր Բնութեանը՝ իրեն ծնող ու սնող բնութեանը:

Ինչո՞վ են զբաղւած քաղաքական այրերը

Սակայն ցաւալին հէնց այն է, որ դրանով հանդերձ, որ օրաւոր զարգացող գիտութիւնը մարդուն

զգուշացնում է ոչ հեռու ապագայում սպասուող աղէտի մասին, այնուամենայնիւ աշխարհակալ, դիւանագէտ ու քաղաքական այրերը, խուսափում են պատասխանատութիւնից: Նրանք զբաղւած են բանակցութիւններով, զանազան բանաձեւեր արձակելով ու պատժամիջոցներ սահմանելով: Սակայն այդ ամէնն իզուր, բոլոր օրէնքներն ու սահմանները, ասես թէ, գործում են միայն թոյլ ու փոքր պետութիւնների համար, որոնք, ի դէպ, ամենափոքր մեղքի բաժինն ունեն այդ աւերածութեան՝ օդի

աղտոտաճութեան, օզոնի շերտի նոսրացման կան ջերմոցային գազերի արտանետման գործում: Իսկ ջերմոցային գազերով մեր բնութիւնն աւերող արդիւնաբերական մեծ պետութիւնները, ամենայն համարձակութեամբ այդ համաձայնագրերը չեն ստորագրում եւ շարունակում են իրենց չարաբաստիկ գործը՝ առանց պատժամիջոցներից վախենալու:

Այս միջոցին չմոռանանք յիշել յատկապէս բնապահպանութեան պաշտպան կազմակերպութիւնների, որոնք մարդկութեան արթուն աչքը դարձած՝ հետեւում են ամենուր կատարուող «անբնական» գործողութիւններին եւ հասարակութեանը իրազեկ դարձնելով փորձում հնարաւորին չափ կանխել այդ աւերածութիւնները:



Պատկեր Ճապոնիայի 2011 թականի ցունամիից

ՈՎԿԻԱՆՈՍԸ ԼՈՌԻԹԻՒՆ Է ԽՆԳՐՈՒՄ

Նաւերի շարժիչների հռնդիւնը, հիդրոլոկացիոն ազդանշանները, սէյսմահետախուզութեան ժամանակ պայթիւնները եւ ռազմական փորձարկումների ժամանակ աղմուկը յանգեցրել են նրան, որ հա-

մաշխարհային օվկիանոսում աղմուկի մակարդակն անտանելի է դարձել ջրային շատ կենդանիների համար: Վերջին 50 տարում ջրի տակ ձայնի ուժգնութիւնը աւելացել է 20 դեցիբելով:

Ծովային կաթնասունները միմեանց հետ շփուլում են ձայնային ազդանշանների միջոցով: Նրանց համար լսողութիւնը նոյնքան կարեւոր է, ինչքան մարդու համար՝ տեսողութիւնը: Ակուստիկ “մշուշը”,



Տեղ-տեղ հնչեցնում են ահազան-գեր այսինչ գործարանի քիմիական միջոցի միջոցով տարածքի օդը, կամ ջրապաշարները, զետերն ու լճերն թունաւորելու եւ դրա՝ այս կամ այն ողբերգական հետեւանքի մասին՝ մարդու, կենդանական ու բուսական տեսակների համար: Այնուամենայնիւ միայն լուրերին անզամ հետեւելով, կարելի է եզրակացնել, որ դրանք ոչինչ են այն ամէնի դէմ ինչ արւում է:

Գիտաֆանտաստիկ թեմաներով ֆիլմերը, եթէ մի ժամանակ միայն երեւակայութեան արդիւնք էին համարւում՝ մորեխների, կամ այլ կենդանատեսակների յարձակում, երկիր մոլորակի սառցակալում կամ ընդհակառակը՝ կրակի մէջ վառւելը, ատոմային պայթիւն-

ներ կամ ատոմակայանների անսարքութեան հետեւանքով միջուկային ճառագայթում, եւ, եւ, եւ... Այս բոլորն, այսօր, այլեւս մարդու ֆանտազիայի արդիւնք չի կարող համարւել: Այսօր մարդը այդ բոլորի ականատեսն է դառնում ոչ միայն ֆիլմերում, այլ հենց իրական կեանքում:

Մարդը կենդանական աշխարհի ինքնակոչ տիրակալը

Այս կապակցութեամբ յիշեցի օրեր առաջ հրապարակւած լուրը, որով ունկնդիրը տեղեկանում էր Չայաստանի ինչ-որ գիւղի տներում թունաւոր օձեր յայտնւելու, իսկ մէկ այլ գիւղում գայլերի ոհմակների յարձակման մասին: Եւ հետաքրքիրն այն էր, որ օձից տուժած գիւղացին գտնում էր, որ

ոչ թէ օձերն են յայտնւել իրենց տներում, այլ իրենք՝ մարդիկ են, որ գրաւել են նրանց կենսավայրը, բները: Տարօրինակ է. Սա հակասում է մարդ արարածի՝ ինքնագոհութեան շեմն անցած միակալ տիրոջ, վերաբերմունքին բնութեան հանդէպ: Այս կապակցութեամբ յիշեցի նաեւ այն հասարակ թւացող զրոյցը, որը շատ յաճախ ունենում ենք շրջապատի մարդկանց հետ՝ քաղաքային բնակավայրերում իրենց գոյութիւնը մի կերպ քարշ տուղ հատ ու կենտ կենդանիների մուշների՝ կատուների, շների, թռչունների կամ միջատների մասին: Բոլորը միահաւասար դատապարտւած են ոչնչացման, քանի որ բոլորն էլ կեղտոտ են եւ մարդու համար վտանգաւոր: Բայց քչերն են մտ-

որ առաջանում է մարդկային գործունէութիւնից, կենդանիների զրկում է շփւելու եւ ընկալելու, տարածութեան մէջ կողմնորոշւելու ունակութիւնից, սնունդ հայթայթելու եւ բազմանալու հնարաւորութիւնից: Նշենք միայն, որ փոքր մոտորանաւակի ծայնը բաւարար է, որ խլացնի դելֆիններին 26-58 տոկոսով:

Գիտնականների կարծիքով դելֆինների եւ կետերի զանգւածային ինքնասպանութեան պատճառը հենց այդ աղմուկն է, որը հիմք է հանդիսանում, որպէսզի կենդանիները տարբեր խանգարումներ ունենան՝ դառնան ագրեսիւ, թողնեն երեխաներին, կորցնեն կողմնորոշումը, «հացադուլ» յայտարարեն եւ ի վերջոյ ափ նետւեն:

ԱՄՆ-ՈՒՄ ՏԱՍՆԵԱԿ ԴԵԼՖԻՆՆԵՐ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆ ԴԻՍԵԼ

Անցեալ Յունւարին ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգի ափերին, վերջին մի քանի օրերին, աւելի քան 60 դելֆիններ իրենց ծովափ են

նետել: Կենդանիների պաշտպանութեան միջազգային հիմնադրամի ներկայացուցիչները յայտնում են, որ յաջողւել է փրկել միայն նրանցից 19-ին:

Հիմնադրամի աշխատակիցները փրկւած դելֆիններին համապատասխան օգնութիւն են ցուցաբերել, որից յետոյ բաց են թողել ովկիանոսում:

Այդ ընթացքում փրկարարները եւ շուրջ 300 կամաւորներ շարունակում էին հերթապահութիւն իրականացնել Քէյփ-Քոդի ծովափե-

րում, որպէսզի անհրաժեշտութեան դէպքում օգնութիւն ցուցաբերեն ափ նետուող դելֆիններին: Դա դելֆինների զանգւածային ինքնասպանութեան առաջին դէպքը չէր: Նման դէպքեր գրանցւում են նաեւ այլ երկրներում: Այսպէս, հենց միւլուսի Յունւարի սկզբին նման դէպք է արձանագրւել նաեւ Նոր Զելանդիայում: Գիտնականները դեռ չեն կարողանում յստակ պատասխան տալ, թէ ինչ պատճառով են դելֆինները նման քայլի գնում:



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԸ ԿՈՐԾԱՆԻ ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃԸ



Մայիսի երկուսից Սեւանի ջուրը բաց է թողնել, այսպես ասած, գիւղացիներին օգնելու նպատակով: Բայց ԱԺ-ում քննարկված այս օրինագիծը լուրջ մտահոգութեան տեղիք է տւել բնապահպաններին եւ ընդդիմութեան որոշ ներկայացուցիչներին: 150

մլրդ խորանարդ մետր ջրի կորուստը լուրջ խնդիրներ է ստեղծելու Սեւան լճի համար: Ստացւում է, որ գիւղացիական տնտեսութեան համար վտանգւում է մեր ունեցած ու միակ պարծանք «ծովը»: Ահազանգում են բնապահպանները:

Mardik.am-ը գրուցելով «Էկոլոր» տեղեկատուական ՉԿ-ի նախագահ Ինգա Ջարաֆեանի հետ, փորձեց պարզել, թէ բնապահպաններն ու ՉԿ-ն ինչ քայլեր են ձեռնարկել այս աղէտի դէմն առնելու համար:

Տիկին Ջարաֆեանը նշեց, որ Սեւանայ լճից 150 մլրդ խորանարդ մետր ջուր բաց թողնելն իսկական աղէտ է, քանի որ այս կերպ խաղում են լճի ճակատագրի հետ. «Ձրի բացթողնման իսկական պատճառները թաքցւում են, անգամ փորձագէտների խումբը իրական պատճառներն ու հետեւանքները չեն ասում, տպաւորութիւն է ստեղծւում, որ նրանց նկատմամբ ուժ են կիրառել»:

Նշենք, որ տարածւած խօսակցութիւնների համաձայն, քանի որ ջուրն անցնում է Յրազրան-Կասկաղով, որը պատկանում է ռուսներին, հսկայական հոսանք է ար-

նում հարցի էութեան մէջ եւ մտածում՝ արդեօք դաշտերում մաքուր ու՝ մարդու կողմից չաղտոտւած բնութեան մէջ ապրող մկները, կատուները, շնե՞րն էլ են աղտոտ, թե՞ նրանք քաղաքներում է, որ ակամայ կրողն են դառնում մեր իսկ ձեռքն ստեղծած աղտոտւածութեան: Միւս կողմից մկների կամ կատուների ու բոյսերի անբնական աճը որոշակի բնակավայրերում դարձեալ մարդու անհարկի միջամտութեամբ է պայմանաւորւած, քանի որ բնական պայմաններում, ուր իրար կողքի ապրում են բոյսերն ու կենդանիները, չի կարող ինչ-որ տեսակի անբնական աճ նկատուի: Այս ամէնի մէջ մենք միայն այն գիտենք, որ պէտք է վերացնել հարցը՝

տւեալ կենդանատեսակը՝ եթէ հաճելի չէ մեզ, տւեալ ծառատեսակը եթէ պերզածին է համարւում, կամ անտառը ամբողջութեամբ, եթէ մեզ հարկաւոր են նոր քաղաքներ ու նոր ճանապարհներ: Եւ այսպէս անհատնում շղթայ:

Ցաւալի է, որ բոլոր դէպքերում իրականում մարդը կարող է շատ աւելի գազան ու արիւնարբու լինել քան ցանկացած գիշատիչ գազան: Այս կապակցութեամբ յիշեցի մի փոքր թւացող դէպք, որն անկարող եմ երբեւէ մոռանալ: Բազմայարկ շէնքի ձեղնայարկում ծագոտել էր գեղեցիկ փափուկ կատուն, որն ամենայն «մարդկային» հոգատարութեամբ ու զգուշութեամբ խնամում էր իր փոքրիկ՝ դեռ աչքերն աշխարհի

վրայ չբացած ձագուկներին: Եւ ահա ամենակարող դաժան մի մարդ իր հսկայական, թերեւս քաղցած, գազան շանը շղթայով կապած, ուղորդեց դէպի մայր կատուի խաղաղիկ ու փոքրիկ անկիւնը: Մի վայրկեանում շունը խժռեց բոլորին, եւ նրանցից միայն փոքրիկ ականջներ մնացին այս ու այն կողմ թափւած: Ոմանք գուցէ ասեն թէ՛ ի վերջոյ շունն է գիշատիչը, բայց ես այդ կարծիքին չեմ, եւ այստեղ եւս միակ մեղաւորը մարդուն եմ համարում, քանի որ բնական պայմաններում կատուն ծագոտում է վտանգներից հեռու, ապահով անկիւնում, իսկ քաղաքում նա ո՞ւր կարող է գնալ, որ անվտանգ լինի, ուր չլինեն մարդիկ, մեքենաներ, եւ միա-

տադրելու, որն էլ վաճառելու է ԴԵՑ-երին: Այսինքն՝ վարկածի համաձայն հայ գիւղացիների անլան տակ ռուսներն են գործում: Իսկ տիկին Ջարաֆեանը յաւելեց, որ իրենց կազմակերպութիւնում ուսումնասիրութիւն են կատարում, բացայայտելու համար իրական պատճառը: Բացի այդ, ըստ Ջարաֆեանի՝ գիւղացիներին ոչ մի ոռոգման ջուր էլ չի հասել, քանի որ ոռոգման թէժ շրջանը սկսւում է Յունիսից, իսկ Սեւանից ջուրը բաց է թողնւել Մայիսի սկզբից. «Կառավարութիւնը ոչնչով չի աջակցում հայ գիւղացուն, անգամ թոյլ չեն տալիս բերք ստանան, վաճառեն եւ եկամտից ոռոգման ջրին յատկացնեն, եթէ դեռեւս բերքը չեն

հաւաքել, ինչպէ՞ս են ջրի գումարները վճարելու»:

Տիկին Ջարաֆեանն այն կարծիքին է, որ Սեւանից ջուր բաց թողնելը վաղուց էր ծրագրւած:

Ինգա Ջարաֆեանի հետ համակարծիք էր նաեւ «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Ռուբէն Յակոբեանը: Նա նշեց, որ իրենք դէմ են քւէարկել նաեւ այս օրինագծին եւ հիմնաւորել են ինչու. «Ասեմ, որ Սեւանայ լճի ուղղութեամբ շատ փնթի մօտեցում է ցուցաբերում, բացի այդ ԱԺ-ում շատ վտանգաւոր որոշում կայացրեցին Սեւանայ լճի ջրի օգտագործման հետ կապւած»:

Աղբիւր՝ mardik.am



ժամանակ սնունդն ապահովւած լինի: Ես կասեի ոչ մի տեղ: Չկայ նման վայր: Մենք սողոսկել ու աստիճանաբար գրաւել ենք բոլոր կենդանատեսակների բնակավայրը եւ դեռ դժգոհում ենք նրանց գոյութիւնից ու անխնայ ոչնչացնում:

Ինչպիսի՞ աշխարհ ենք թողնելու մեր երեխաներին

Ինձ թւում է, եթէ սիրում ենք մեր երեխաներին ու թռռներին եւ ցանկանում ենք նրանց յանձնել մի մոլորակ, ուր կարողանան անվտանգ ու ապահով վայելեն կեանքի բնական վայելքներն ու ողջ գեղեցկութիւնը, պէտք չէ շատ հեռուն գնալ կամ անպայման ինչ-որ բան յօրինել: Այս նպատակով

հարկաւոր է իւրաքանչիւր ոք իր տեղում հանգիստ չնստի՝ սպասելով, որ այս կամ այն պետութիւնը քայլեր ձեռնարկի եւ փրկի մեր Մայր Բնութեանը: Մինչ այդ ցանկացած մարդ պէտք է իր հերթին խորհի հէնց սեփական արածի ու չարածի մասին՝ լոգանք ընդունելու եւ տան լուսաւորութեան պէս հասարակ առօրեայ գործողութիւններից սկսած մինչեւ թափւած թղթի, պլաստմասայից կամ միանգամեայ օգտագործման իրերից ստացւող աղբի չափը եւ ձեւը, քանի որ այդ բոլորից կարելի է եզրակացնել թէ որքա՞ն բնական ռեսուրսներ ենք օգտագործում, որքա՞նն է տեղին եւ որքանը՝ վատնում, որքա՞նն է քայքայւող ու բնութեանը վերադարձւող եւ

որքա՞նը թունաւորող ու վնասակար թափօն: Եւ այս բոլորը գնահատելուց յետոյ միայն որոշել սպառման մեր ճիշտ ձեւն ու չափը:

Ուշադրութեամբ պէտք է հետեւել մեր շրջակայ միջավայրի բնութեան պահպանմանը, կանաչ գօտիների ու ջրաւազանների պահպանմանն ու մաքրութեանը, եւ ի վերջոյ՝ ամենակարեւորը՝ տեղում ապրող կենդանիների մասին հոգ տանելը: Թոյլ մի՛ տւէք բթանայ ձեր այն ջիղը, էութեան զգօն լարը, որ ձեզ միշտ պիտի յուշի թէ բնապահպանութեան առումով որն է ճիշտ եւ որը սխալ: Հաւատացէք, որ սա ոչ պակաս կարեւոր է, քան այն ներքին խղճի ձայնը, որ մեզ յետ է պահում ցանկացած յանցագործութիւնից: Ես կասեի՝ դեռ աւելի կարեւոր է, քանի որ եթէ կողոպուտի կամ մարդասպանութեան պարագայում, մեղաւոր ես մի կամ մի քանի մարդու հանդէպ, բնութեան հանդէպ գործւող «յանցանքն» ուղղւած է ողջ մարդկութեան, կենդանական ու բուսական աշխարհի դէմ: Ուրեմն հարկաւոր է հետեւել ոչ միայն սեփական գործողութիւններին, այլեւ քո շրջապատի մարդկանց, քաղաքի, հայրենի երկրի, եւ աւելի հեռուն գնալով, հարեւան ու ոչ հարեւան երկրների գործողութիւններին, եւ կատարել մեր միեւնոյն պարտքը՝ ամենուրեք եւ ամէն պարագայում պահպանել բնութիւնը եւ նախկինից աւելի լաւ պայմաններում այն յանձնել մեր երեխաներին ու մի խօսքով յաջորդ սերնդին: Այս միջոցով միայն, երեւի կը կարողանանք փրկել մեր երբեմնի դրախտավայր երկիր մոլորակը աստիճանական ոչնչացումից: Իրօք երբ խորն ես մտածում, ինչ-քա՞ն բան ունենք անելու...

ԳՐԻԳՐ ՊՐԼՏԵԱՆԻ ՄԵԾԱՐՈՒՄԸ ԳԼԵՆՂԵԼՈՒՄ



Սոյն թւականի Ապրիլ-Մայիս ամիսներին սփիւռքահայ գրող, բանաստեղծ եւ գրականագէտ Գրիգոր Պրլտեանը այցելեց Գլենդէլ, ուր մեծարեց UCLA համալսարանի Հայոց լեզւի եւ մշակոյթի ուսումնասիրութիւնների բարեկամների կողմից եւ պարգեւատրեց Նարեկացի մեդալով: Պրլտեանը սփիւռքահայ լաւագոյն գրողներից է, որ այժմ բնակոււմ է Փարիզում եւ դասաւանդոււմ է արեւելեան լեզուների հաստատութիւնում: Պրլտեանը 2009 թւականին «Հանդէս» պարբերաբերի հրաւերով այցելեց Իրան, եւ իրանահայ գրական շրջանակները առիթն ունեցան ծանօթանալու նրա հետ եւ ունկնդրելու նրա տեսակէտները հայ գրականութեան մասին: Ստորեւ մեր ընմթերցողին ենք ներկայացնում նրա «Սեմեր» վէպի մասին իրանահայ բանաստեղծ Նորվանի համառօտ գրութիւնը եւ մի փոքր հատուած նոյն վէպից:

ՊՐԼՏԵԱՆԻ «ՍԵՄԵՐ» ՎԷՊԻ ՄԱՍԻՆ

Նորվան

Պրլտեանը գիտի հետաքրքրութիւն առաջացնել առաջին իսկ տողից, եւ առաջին տողը կարելոր է այնքանով, որ այն ճակատագրական հարածն է համարոււմ տեքստի դուռը բացելու եւ ընթերցանութեան ճանապարհորդութիւնը շարունակելու կամ չշարունակելու առումով: Նա յաճախ վէպն սկսում է մէկ կամ մի քանի բառով, որով ընթերցողին միանգամից ներառում է պատումի մէջ, ուշադրութիւնը սեւեռում, ցնցում ու մտածել տալիս: «Սեմեր»-ում եւս հասցւած է առաջին ազդու հարածը՝ «Հը, նա», եւ ակամայ խորհում եւ՝ ո՞վ է «Ո՞ր»-ն, ո՞վ է նախադասութեան արտաբերողը, նստած է թէ՛ կանգնած, եւ ինչո՞ւ այդքան կոպիտ, եւ այսպէս շարունակ այլ հարցեր են առաջադրոււմ: Գրողը անկեղծօրէն յանձնոււմ է իր ստեղծած կերպարների, թոյլ է տալիս՝ մտածեն, խօսեն, նրանք իրենց մտքերի ու արարքների տէրն են, քանի որ պատումն էլ կենդանի երեւոյթ է,

որում բոլոր անձինք իրենց սեփական կեանքն ու իրաւունքներն ունեն. ոչինչ հաւաստի չէ, վերջնական դատողութիւն, դիտանկիւն չկայ, ամէն ինչ յարաբերական է, ինչպէս կեանքում է:


Դէպի ապրած ու ապրող կեանքերի խորքը տանող այս ճանապարհորդութեան ընթացքում մեզ ուղեկցում է անտեսանելի, բայց մշտական ներկայութիւն ունեցող «Ձայնը» (այդ մասին քիչ յետոյ), որ իրեն փոխանցւած լուսանկարների տրցակը յանձնում է պատմող տղային, շեշտելով «Նայէ»: Ահաւասիկ, իջեցւած է կախարդական փայտիկը՝ նայիր, տես, պահիր ու մտապահիր, «... առանց որոշելու անունը տուածին, գուցէ ընդգծելու համար տալը միայն եւ ո՛չ թէ տուածը, ոչ թէ ընծան, այլ ընծայելը.», իսկ ընծան՝ լուսանկարների հնացած, յոգնած ծրարը, «որ չես գիտեր ուրկէ կուգայ» իր մէջ անփոփած կեանքերի ման երկար ու դժւարին ճակատագիր ունի, պահ է դրել սնդու-

կի մէջ, անցել է ցամաքից ցամաք, ձեռքից ձեռք... այնուհետեւ հնչեցում է «Դուն պահէ» թելադրող, պարտաւորեցնող նախադասութիւնը, որպէսզի լուսանկարները նոր հանգրուան գտնեն: Բայց, տղան ինչո՞ւ պիտի պահի, որքանո՞վ են պատմողի՝ նոր տիրոջ հետ առնչոււմ, չէ՞ որ դա իր ժամանակը չէ, իր պատմութիւնը չէ, եւ միթէ զո՞ւր է երկմտանքը՝ «երբեք չեմ կրնար մտնել այնտեղ», այդուհանդերձ՝ մտնում է լուսանկարների սեմից: Իւրաքանչիւր լուսանկար դէպի անցեալ բացուող լուսամուտ է, դէպի երեք կնոջ աշխարհ, մէկը՝ «իր հոգեվարքին մէջ քրտնած, միւսը՝ դռնէն ընդառաջող ոտնածայնի ուղղութեամբ, երրորդը, որ աշխարհը կը կշռէ իր լուսամուտի ճաղերէն»:

Ամէն ինչ այստեղ է, այս իւրովի պատում-լուսանկարում, որը հենց հիմա ընթացող, միեւնոյն պահին մեռնող, քարացած ներկան է: Մեռելներն ապրում են մեր մէջ, մեր յիշողութեան ծալքերում, եւ մոռա-

ցութիւնից փրկելու համար՝ հարկաւոր է անւանակոչել, արծանագրել իրողութիւնը, ուրեմն՝ «գրէ՛, ջրլլայ՝ մոռցուի՛ն», սակայն առանց խօսքի լուսանկարը սոսկ տեւականացւած ներկայ է, այն յաւերժացնելու համար՝ անհրաժեշտ է պատկերին միահիւսւած ծայրը, որի միջնորդութեամբ ու զօրութեամբ լուսանկարները երեւում են, շարժում, մոռացութեան մոխիրների տակից յառնում. «անանկ մը ըրէ՛, որ սրանք ապրին», այսպիսով՝ լուսանկարները դառնում են վէպի առանցքային կերպարները, եւ առանձին պատում աւարտում է նոր պատումով, նոր սկիզբով:

Իսկ ծա՞յնը: Այն մտածողութեան շղթայի մեխանիկական ար-



դիւնքը չէ, այլ՝ լուսամուտ, որով մարդը նայում է աշխարհին: Որեւէ մէկին մտքում պատկերացնելուց առաջ նրա ծայնն ենք լսում, ծայնը կերպարի մարմնացումն է: Այն աշխարհը, որում ոչ ոք չի խօսում, ինչպիսի՞ աշխարհ կը լինի: Յնչած ծայնով ինչ-որ բան է տեղի ունենում, արարում են զգացմունքներն ու յարաբերութիւններն:

րը: Եւ Պըլտեանը ծայնը արարելու, լսելի դարձնելու վարպետ է, որովհետեւ բառերը ոչ թէ բառաբաններից ու գրքերից են պահ վերցրած, այլ գրողի, ինչու չէ նաեւ կերպարների փորձառութեան արդիւնքն են: Եթէ կեանքի արմատները մթութեան մէջ են թաքնւած, ու եթէ գրողը փորձում է վերծանել այդ թաքնում շերտերը, ապա տեղի է ունենում կախարդանքը, բառերը դառնում են լուսամուտներ՝ դէպի մէկ կամ մի քանի հաւանական իմաստներ, որոնք ստւերի նման հետեւում են տւեալ բառին: Ուստի եւ՝ նայէ՛րդ՝ ունի պահէ-բաց, եւ լուսամուտները բացւում են դէպի մի հաւաքական կեանք, հաւաքական ճակատագիր: Նրանք վտարւեցին հայրենիքից, սփռւեցին, օտարացան ու բնակւեցին լեզւում, լեզուն դարձաւ նրանց հայրենիքն ու հանգրուանը, ինչու չէ նաեւ հաւաքական յիշողութիւնը:

Գրողի հմտութիւնը երեւան է գալիս կանանց կեանքն ու կամքը դրատելու, քննելու եւ հասարակական ու անհատական փորձը զարգացնելու, նաճելու ուղղութեամբ կենդանի լեզուն լաւագոյնս օգտագործելու մէջ, այնպէս որ՝ բարբառային, նոյնիսկ օտար բառերը աւելի են երանգաւորում ու ձեւաւորում կերպարների ներաշխարհը:

Լեզւի ճարտարապետը այնպէս է շնչաւորում բառերը, խմորում նախադասութիւնները, որ երկարաշունչ պարբերութիւններն ու էջերը զարմանալիօրէն կարդացւում են արագ տեմպով, ընթերցողը շնչասպառ է հետեւում ոչ-հորիզոնական պատումին:

Ահա՛ Էլմոնը: «Քովը մէկ հատիկ աղջիկն է»:

Հաւաստի ոչինչ չկայ, եւ այդ անհաւաստիութիւնը տարածւում է ողջ վէպի լայնքով ու երկայնքով՝ ընթերցողին ներքաշելով պատումի մէջ, մասնակից անելով դէպքերին ու իրադարձութիւններին,

թողնելով, որ նա էլ իր ենթադրութիւններն ունենայ, իսկ «միակ» հաւաստին Էլմոնի տառապանքը խորհրդանշող յաւիտեանական սեւ հագուստն է, Մարիամի մահւան անլուծելի առեղծւածը, Պելֆորում չորրորդ յարկի իր տան պատշգամբից նրա վար նետւելու լուրը, որի հետ չէր կարող հաշտւել Էլմոնը: Յաճախ Չայնի պատմածից ու ցուցաբերած վերաբերմունքից ենք «պատկերացում» կազմում մարդկանց ու եղելութեան մասին, օրինակ՝ երբ ակնարկում է լուսանկարի մէջ երեւացող Մարիամի կեսուրին. «Իրենցմէ ուրիշներ ալ ըլլալու են անդին, է՛ն առջեւը ատ կնիկը սանքի կեսուրը ըլլալիքն է, նայէ՛, ետեւը գրուած չէ նէ, գրէ՛ Մարիամին կեսուրը, կամ ալ ձգէ՛, պէտք չէ, անունն ալ չպահուի թող, արդէն հիմա շատոնց սատկած պէտք է ըլլայ»: Երբեմն էլ հաղորդակցւում ենք պատմող տղայի ենթադրութիւններին, որն ուզում է հաւաստիացնել անհաւաստին, կարծիք կազմել Մարիամի ուղարկած բացիկի յետեւում գրած երեք բառերի միջեւ ընկած տարածութեան մասին՝ նկատելով, որ «մէկ» բառը առանձնացւած է համարեա թէ իրար շաղկապւած «հատիկ» եւ «մայրիկիս» բառերից. «Լռութիւն մը կայ հոս, ճիշտ հոս, ուր Մարիամը կը թուի, թէ բան մը կ'ըսէ, բան մը կու տայ ինքն իրմէ»:

Լռութիւն: Ոչինչ ասել:

Պատմողը դէպի ո՞ր է նայում, ի՞նչ է խորհում, երբ լռում է: Լռութիւնը ինչ-որ բանի խոստովանութիւն է, դադար, յապաղում՝ լսելու կամ չլսելու, ասելու կամ չասելու համար: Լռութիւն, այսինքն՝ դու իմ փոխարէն մտածիր: Բառերի, պարբերութիւնների, մտքերի մէջ զետեղւած ձերմակ բացը ապացոյցն է այն բանի, որ Պըլտեանը յարգում է իր ընթերցողին՝ թոյլ տալով երեւակայութեան մոյզի հեծած՝ ասպատակի իրեն պատկանող տարածքում:



Քանի որ լուսանկարներուն մեծ մասը հեղինակ չունի, ամենէն հիններէն մինչեւ ամենէն նորերը ստորագրութիւն չեն կրեր: Մէկ մասը սովորական թաղային այլազան լուսանկարիչներու անձարակ գործ մ'է, միւս մասը ելած պէտք է ըլլայ Սեդոյի ծեռքէն, Սեդո էմիին, իր հին, անդրջրհեղեղեան մեքենայով կը նկարէր գիւղերէն քաղաք եկող գիւղացիներ, իրեն համաքաղաքացիներ: Թերեւս իսկապէս ան միակ լուսանկարիչը չէ, թէւ չեմ կրնար չընդունիլ, որ ոճ կը կայ, ոսպնեակին դիմաց դէմքերը տեղաւորելու, մանրամասնութիւն մը տեսնելու եւ լուսաւորելու, տեսադաշտի իրերը իրարու հետ յարաբերութեան մէջ դնելու կերպ մը՝ ուր նկարչական մտածում մը կը բանի ականայ,

զաւառացիի իր համով շեշտին ներքին ուղորդ գրեթէ: Արուեստագէտ մը: Պիտի քննիչադէր, քիթին տակէն, այդ բառը ուրկէ՞ գիտնար եւ իր կապոյտ-կանաչ աչքերը պիտի դառնային իրենց խոռոչներուն մէջ, սրամիտ ու լրբենի: Ինձի այնպէս կու գայ, որ ոչ ոք խորհած էր լուսանկարողին մասին, անիկա չկար, ճիշդ՝ ոչ-ոքն էր, դիրք մը չէր, պաշտօն մը չունէր, այլ գուցէ անդադար փոփոխուող կիզակէտ մը: Եւ ասոր որքան տեսնուածին այնքան ներկայացողին, այդ պատկերին, որ պիտի ըսեմ ներքին անտեսանելի պատկեր, որ ես կրնամ միայն կռահել:

Բա՛ց,
եւ այս ամենէն սովորական բառը կը թուի տարօրինակ արա-

րողութեան մը սկիզբը, կարծես չապրուած առօրեայի երազէն կը մտնեն ապրուած իրականութեան, կարծես թէ ես ալ տեղ մը պէտք է գտնեմ ինձի համար լուսանկարներու իրականութեան մէջ, գրաւելով ոչ թէ ոսպնեակին տեղը, որ կը դիտէ դուրսէն, այլ այն միւս կէտը, որ նոյն պահուն կը յամենար յետոյ կ'անցնէր նկարուողի մտքէն, այն միակ թուական, երբ աչքը կը միանայ սոսկումի, վերացումի, ուրախութեան փայլին, անոր որ խօսք չէ, այլ լռութիւն, այլ ցանկութիւն մը խօսքի, քանի որ չկայ լռութիւն առանց խօսքի որ ահա մէկէն կը հնչէ, ինչպէս կրնար ըլլալ Մարիամին գրուածքի ընթերցման պահուն, սենեակի փայտէ չորս պատերուն միջեւ (դուրսը ցուրտ, խոնաւու-

թիւնը տախտակորմի ծերապերէն ներս թափանցող) երբ կը հետեւէին տենդագին պատմութեան մը, որուն ելքն ու մուտքը, ծակն ու ծուկը գիտէին, բայց կը շարունակէին ականջ դնել, ուշադիր, մոռցուած դրուագ մը կը վերյիշէին, Մարիամին կը թելադրէին, որ աւելցնէ լուսանցքին կամ ետեւի էջերուն մէջ, դանդաղ ելեւէջ մը, միապաղաղ թուող շեշտայնութիւն մը, երբեմն ներքին բաբախումէ մը տողորուած կշռոյթ մը կարծես թէ կը կանխեն զիս, կը հետեւին ձայնին, կը թուի թէ կը հետեւին կորսուած գրութեան տողերուն, կը կարօտնամ անոր, կ'աւաղեն անոր պակասը, ես ալ տարուած անգոյ բանի մը հմայքէն, եւ կը քայլեմ գառիվերներուն, սեպութիւններուն, Անթիքայի դանդաղ

ընթացումին, զառիթափներուն ետեւէն, պրկուող, լայնցող հեւքին, որ ձայնին ֆիզիքական իրականութիւնն է անկասկած, երբ ճիգ կ'ընէ արտայուզելու, դուրս բերելու, կերպաւորելու ստեղծումին տուեալները, կը յառաջանամ ձայնով, չեն նայիր անոր դէմքին, չեն կրնար նայիլ, խարխափելու են, բայց կը շարունակեն դիմել առաջ, անոր լռութիւններուն, պէտք է յաղթահարեն զանոնք, անոնց ետին կը լսեն ուրիշ ձայն, այն մէկը, որ կը խօսէր, կը պատմէր, կը կարդար անգիր, եւ երբեմն այնպէս կը թուի թէ լուսանկարը, եթէ շրջեմ, պիտի յայտնուի անիկա:

Լուսանկարին ետեւ ձայն մը կայ, որ կը թուի մենախօսել, բայց երբ կամաց-կամաց ականջս կը

վարժուի անոր ընթացքին եւ նուազ կարեւոր կը նկատեմ պատմածը, այն ատեն կ'ըմբռնեմ, որ ան բնականօրէն է ուրիշ ներկայութենէ մը, որ ներկայ չէ խորքին մէջ, այլ կը կազմէ զօրութեանական ներկայութիւնը մը, եւ թէ հոն բազմաթիւ շունչեր կու գան, կը բախին իրարու, կը սիրեն զիրար, կ'ատեն, կը բզկտեն, կը լքեն զիրար, եւ ամեն մէկ ձայն իր շեշտը ունի, իր լարը, իր բառապաշարը, իր տենդն ու անգոհանքը, բայց բոլորն ալ կը դիմեն կէտի մը, որ բխող ձայնն է, ազատագրուած ասոր, անոր անձնականութենէն, եղած չէզոք խօսուածք մը, որ ականայ խորք մը կու տայ կեանքիս, եւ անոր վրայ ձեռքս կը գրէ անանուն, գուցէ կրկնագիր գրուածք մը, որուն տէրը ես չեմ, ո՛չ այլեւս:

Գրիգոր Պըլտեանի հեղինակութեամբ հրատարակած գրքերի ցանկը

- Տեղագրութիւն քանդող քաղաքի մը համար - 1976թ. (Ա Տիպ), 1997թ. (Բ Տիպ)
- Հատուածներ "Սենեակ"-ի մասին - 1978թ.
- Objects et de'bris - 1978
- Հակաբերթուած / Antipoem - 1979թ.
- Հատուածներ Հօր / Fragments du pe're - 1979թ.
- Տրամ - 1980թ.
- Վայրեր - 1983թ.
- Գրիգոր Նարեկացիի լեզուի սահմաններուն մէջ - 1985թ.
- Մանորաներ - 1986
- Կրակէ շրջանակը Դանիէլ Վարուժանի շուրջ - 1988թ.
- Էր - 1992թ.
- Հատուածներ Հօր - 1993թ.
- Ելք (Մատենաշար Բ շարք) - 1993թ.
- Սեներ - 1997թ.



- Մարտ - 1997թ.
- Հարուածը - 1998թ.
- Ջրոյցներ Բանաստեղծութեան մասին - 1999թ.
- Դէպի Մեծ Փոխաբերութիւն - 1999թ.
- Նշան - 2000թ.
- Cinquante ans de litterature armenienne en France, 1922-

1972, CNRS Editions Paris 2001

- Պատկեր - 2003թ., "Ապրիլ" հրատարակչութիւն
- Անունը լեզուիս տակ - 2003թ., Մատենաշար "Երկ"
- Երկուք - 2006թ., "Ապրիլ" հրատարակչութիւն

ԽՈՐԱՆԱՐԿԱՁԵՒ ԶՄԵՐՈՒԿԸ ՄԵԾ ԴԱՅԱՆՁԱՐԿ Է ՎԱՅԵԼՈՒՄ

Տարիներ առաջ ճանոպացիները սկսեցին աշխատել խորանարդաձև ձմերուկ ստանալու ուղղությամբ եւ յայտարարում էին, որ այդպես շատ ավելի դիւրին կը լինի բերքի տեղափոխումը: Փորձերը յաջող են, հիմա ճապոնիայի Սիկոկու կղզում «քառակուսի» ձմերուկ ստացել են, սպասելիքներն արդարացել են ու դեռ մի բան էլ աւելին: Սովորական ձմերուկից միայն տեսքով տարբերող պտուղը մեծ պահանջարկ է վայելում: Բայց առայժմ արտադրում է



տարեկան միայն 200-300 մման ձմերուկ, ամէն ինչ դեռ առջեւում է:

FORBES-Ը ՇՐՎՊԱՐԱԿԵԼ Է ԱՄԵՆԱՇԱՏ ԵԿԱՄՈՒՏ ՄՏԱՅԱՄ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՃՈՒՅԱԿԸ

«Forbes» ամերիկեան պարբերականը այժմ էլ հրապարակել է Դոլիվուդի ամենաբարձր վարձատրուող դերասանների ամենամեայ ցուցակը: Ըստ ամսագրի՝ վերջին տարում ամենամեծ եկամուտը ստացել է հոլիվուդեան դերասան Թոմ Կրուզը՝ աշխատելով 75 մլն դոլար ու յայտնելով առաջին հորիզոնականում:

Երկրորդ տեղը զբաղեցրած Լեոնարդո Դի Կապրիոն անցեալ տարւայ համեմատութեամբ (77 մլն դոլար) մօտ կրկնակի անգամ քիչ գումար է վաստակել՝ 37 մլն դոլար, սակայն շուտով հեռուստատեսութեան կը բարձրանայ նրա դերակատարմամբ «Մեծն Գեթսբի» ֆիլմը, այնպէս, որ դերասանի եկամուտները

կարող են աճել:

Եռեակը եզրափակող Ադամ Սենդլերի եկամուտը եւս կազմում է 37 մլն դոլար: Չորրորդ տեղը զբաղեցնում է Դուէյն Ջոնսոնը՝ 36 մլն դոլարով եկամուտով: Դինգերորդ տեղում է Բեն Սթիլերը՝ 33 մլն դոլարով: Սթիլին յաջորդում են Բարոն Բօւնը, Ջոնի Դեպը, Ուիլ Սմիթը՝ 30 մլն դոլար եկամուտով:


Յիշեցնենք, որ վերջերս նոյն ամսագիրը հրապարակել էր նաեւ ամենաշատ եկամուտ ստացած դերասանուհիների ցուցակը: Ըստ Forbes-ի՝ վերջին տարում ամենաշատ եկամուտ ստացած կինօդերասանուհին Կրիստեն Ստիւարտն է, ով աշխատել է 34.5 միլիոն դոլար:



ԻՏԱԼԻԱՅԻ ԱՅԾԵՐԸ ՄԱՂՆՈՒՄ ԵՆ ԶՐԱՄԲԱՐԻ ՈՒՂԱՅԱՅԵԱՅ ԴԱՏԸ

Ալպեր լեռնաշղթայում բնակւող այժերը կարող են նախանձ պատճառել ամենամուտ լեռնագնացին: 2010 թւականին լուսանկարած այս պատկերներում կարելի է տեսնել, թէ նրանք ինչպիսի հմտութեամբ են բարձրացել հիւսիսային Իտալիայում գտնուող ջրամբարի համարեա ուղղահայեաց պատը: Այս եւ նման լուսանկարներ շրջանառութեան մէջ են դրւել ինտերնետում եւ ոմանք յաւակնել են, որ դրանք ցուցադրում են ԱՄՆ-ի Վայոմինգ նահանգի Բաֆալօ Բիլ ջրամբարի պատը: Իրականում դրանք լուսանկարւել են Ալպերում, Ադրիանօ Միգլիորաթի անունով իտալացի լեռնագնացի միջոցով, 49 մետր բարձրութիւնից: Այժերին այսպիսի դժւար ու վտանգաւոր ուղեւորութեան է մղել ժայռերի վրայ կուտակւած աղը: Ըստ երեւոյթին բուսական սննդակարգը չի բաւարարում նրանց մարմնի կարիքը հանքային սննդանիւթերի:

Բայց եւ այնպէս, այնքան էլ զարմանալի չէր լինի, եթէ այս պատկերները պատկանէին ԱՄՆ-ն. Մի քանի տարի սրանից առաջ, Մոնթանայում լուսանկարած մի այժի ակրոբատիկ դիրքը, մեծ ուշադրութիւն գրաւեց: Ասես այս արածող արարածները կարողանում են անտեսել երկրագնդի ձգողական ուժը եւ բարձրանալ ուր, որ ցանկանում են:





ԳԵՐՄԱՆԱՅԻ ՕԼԱՖ ՀԱՅԷՔԻ ՎԱՌ ԾԱՂԻԿՆԵՐԸ


Օլաֆ Հայտերը գերմանացիում հաստատուած աշխարհահռչակ իլլուստրատոր, նկարիչ եւ գրաֆիստ արւեստագէտ է: Ծնւել է 1965 թականին Գերմանիայում, մեծացել է Հոլանդիայում, սակայն բարձրագոյն

կրթութիւնը ստացել է Գերմանիայի Դիւսելդորֆի արւեստի բարձրագոյն դպրոցում:

Նա իր գործերում օգտուում է ժողովրդական արւեստի, դիցաբանութեան, կրօնի, պատմութեան եւ աշխարհագրական աղբիւրներից, որպէսզի ուսումնասիրի իրականութեան եւ երեւակայութեան մի-



Մարի Ամոնոյան




Շեքսպիեր



ջել յարաբերութիւնը մեր ժամանակներուն: Հայէքը պատկերազարդել է միջազգային հեղինակաւոր մամուլի «Նիւ Եօրքեր»-ի, «Վալ Սթրիթ ժուռնալ»-ի, «Նիւ Եօրք Թայմզ»-ի եւ այլնի էջերը: Պատկերազարդել է գրքեր, նկարել է դիմանկարներ, եւ աշխատել է մոդայի աշխարհում: Հայէքի գործերուն կարելի է տեսնել Ֆրիդա Բալոյի, Բուտիչեւսկիի եւ Կուբայի 1960 թւականների որմնազդերի ոճային ազդեցութիւնը: Նա օգտագործում է վառ գոյներ եւ սիրում է յատկապէս կապոյտը: Նա չի թաքցնում, որ ներշնչւում է ամենազանազան աղբիւրներից. սկսած հասարակ գրքերի եւ թերթերի պատկերազարդումներից, մինչեւ բնիկ ամերիկացիների ձեռքի արւեստը: Հայէքի բոլոր գործերուն ներկայ է բնութիւնը եւ յատկապէս ծաղիկները:



Կրօնական բարեփոխութեան ռաիվիրաներ



ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌ, ՊԱՅՄԱՆ ԵՒ ԱՌԻԹ

Կամո Վարդանյան

Ինքնասպանության հոնգեբանական վերլուծությունն ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ երեւոյթն առաջացնող պատճառների ուսումնասիրութեանն ու պարզաբանմանը, կարելորելով այն, ինչն ընկած է սուիցիալ վարքի հիմքում:

Հոգեբանական վերլուծութեան այս ասպեկտի կարելորութիւնը պայմանաւորւած է նրանով, որ բնութեան մէջ գործող ամէն մի երեւոյթ պատճառականացւած է: Այդ օրինաչափութիւնից զերծ չէ նաեւ ինքնասպանութիւնը:

Հարկ է նշել, որ երբեմն շփոթում են ինքնասպանութեան «պատճառ», «պայման» եւ «առիթ» հասկացութիւնները փորձելով նոյնացնել դրանք:

«Պատճառ»-ն այն ամէնն է, ինչն առաջացնում եւ պայմանաւորում է սուիցիդը: Գլխաւորի կողքին կարող են լինել նաեւ երկրորդական պատճառներ:


«Պայման» ասելով նկատի ունենք երեւոյթների այն ամբողջութիւնը, որոնք թէեւ չեն առաջացնում կոնկրետ հետեւանքներ, սակայն հանդիսանում են անհրաժեշտ նախադրեալ՝ վերջինիս ծագման եւ զարգացման համար, քանզի չի կարող լինել պատճառ եւ հետեւանք առանց որոշակի պայմանների: Պայմանն էականօրէն ազդում է ոչ միայն գործողութեան պատճառի, այլ նաեւ հետեւանքների վրայ:

«Առիթ»-ն ի տարբերութիւն պատճառի իրադարձութիւն է, որը խթանում է պատճառի գործարկումը: Առիթը կրում է արտաքին, պատահական բնոյթ, հետեւաբար՝ պատճառա-հետեւանքային շղթայում որպէս օղակ չի ներկայանում: Այդ պատճառով էլ ինք-


նասպանութեան առիթների վերլուծութիւնը չի նպաստում պատճառների բացայայտմանը:

Ինքնասպանութեան պատճառները բաւականին տարբեր

են: Կառնազինը գրում է. «Ինքնասպանութիւնը անհասկանալի ֆենոմեն է բարոյական աշխարհում: Իւրաքանչիւր ինքնասպանութիւն անհատական է եւ իր հիմ-



Ինքնասպանութեան վիճակագրական տւեալներն աշխարհում
■ Իւրաքանչիւր 100 հազար հոգու մէջ



■ Թեհրան
■ Մազանդարան
■ Գիւլան

Ինքնասպանութեան ամենամեծ թիւն արձանագրած երեք նահանգների համեմատական աղիւսակը՝ 2008-ից 2011 թթ.

քում ունի տարբեր պատճառներ՝ ինչպես սոցիալական, այնպես էլ ներանձնային:

Մահուան ընտրության վրայ ազդող գործոններն այնքան տարատեսակ են, որ ինքնասպանի հոգեկան վիճակը վերականգնել գրեթե անհնար է եւ այդ անհնարինուծանից ելնելով էլ հակած ենք ամէն ինչ յանգեցնել արտաքին պատճառներին»:

Պ.Շիրիխեւը սուիցիդի հիմնական պատճառ համարում է սեփական գոյութեան անհմաստութիւնը եւ ապագայի անորոշութիւնը: Վերջինս կապում է հասարակութեան տնտեսական վիճակի անկայունութեան, տարերային գաղափարախօսութեան, հասարակական, բարոյական նորմերի գերազնահատման հետ:

Համաշխարհային գիտա-մեթոդական սուիցիդոլոգիական կենտրոնի տնօրէն՝ Ս.Համբարձումովը սուիցիդը համարում է սոցիալ-հոգեբանական վիճակ, որ անձն ապրում է անլուծելի կոնֆլիկտի պայմաններում եւ հիմնական պատճառ համարում է մարդու մեկնակութիւնը, որը զուգակցելով սոցիալ-տնտեսական գերսթրեսային անկայունութեան հետ յանգեցնում է ողբերգական վախճանի:

Կոլումբիական համալսարանի հոգեբան՝ Ջեֆրի Եանզը ինքնասպանութեան պատճառ համարում է դէպրեսիան: Այդպէս է գտնում նաեւ պրոֆեսոր Ս.Վիլիամսը: Նա ուշադրութիւն է դարձրել ինքնասպանութեան փորձ կատարած մարդկանց յիշողութեան վրայ եւ հաստատել, որ նրանց յիշողութիւնը խեղաթիւրած է, մակերեսային, պարփակւած է ընդհանրական երեւոյթներով:

Այդպիսի մարդիկ մշտապէս կրկնում են միեւնոյն բանը, օր. «Ես միշտ անյաջողակ եմ եղել», «Ինձ երբեք ոչ ոք չի սիրել» եւ այլն: Անցեալը նրանց համար դիտւում է որպէս անյաջողութիւն-

ների եւ հիասթափութիւնների շղթայ:

Վիլիամսն ասում է. «Սակայն փորձէք այդպիսի մարդկանց յիշեցնել, որ իրենց անցեալում, ինչպէս բոլոր մարդկանց մօտ, նոյնպէս եղել են երջանիկ պահեր, օր.՝ ծննդեան տօներ, հանգիստը սիրելի անձնաւորութեան հետ եւ այլն»: Սա կոնկրետ իւրայատուկ յիշողութիւն է, իսկ դէպրեսիւ մարդիկ, որոնք փորձում են վերջ տալ իրենց կեանքին, այս իրադարձութիւնների մասին, որպէս կանոն, յիշում են ընդհանուր ձեւով: Այդ պատճառով էլ իրենց կեանքի դժուար պահերին դէպրեսիւ վիճակից դուրս գալու համար միայն յիշողութիւնը նրանց բաւարար չափով աջակցութիւն ցոյց չի տալիս, քանի որ մարդիկ իրենց յիշողութիւնը օգտագործում են որպէս հիմք իրենց ապագան կառուցելու համար:

Նրանք, ովքեր մառախլապատ եւ ընդհանուր գծերով են յիշում անցեալը, այդպէս մակերեսային էլ պատկերացնում են իրենց ապագան: Սրանում է հէնց կայանում դէպրեսիւ մարդկանց դրութեան բարդութիւնը:

Վիլիամսը պրակտիկայում կիրառելով իր տեսութիւնը բացայայտում է դէպրեսիայով տառապող պոտենցիալ ինքնասպաններին: Նա հիւանդների ուշադրութիւնը կենտրոնացնում է նրանց կեանքի որոշակի ասպեկտների վրայ, հիւանդների հետ կազմում է նրանց անցեալի իրադարձութիւնների մանրամասն օրագիրը, պլանաւորումը՝ ապագայ կեանքը: Այդպիսի կառուցածքային հոգեթերապիան արդիւնաւետ մեթոդ է երիտասարդ մարդկանց շրջանում ինքնասպանութեան կանխման համար:

Որպէս ինքնասպանութեան պատճառ հանդէս են գալիս նաեւ հռչակի, փառքի կորուստը (յատկապէս տարածւած է կինօդերասանների շրջանում), հայրենասի-

րութիւնը, ազատագրկումը, անբուժելի հիւանդութիւնը, դժբախտ սէրը, յուսալքութիւնը, կուռքի մամակումը եւ այլն:

Մի շարք հետազօտողներ փորձել են տալ ինքնասպանութիւն առաջացնող պատճառների դասակարգումը:

Ս.Վ. Բորոդինը եւ Ա.Խ. Միխիլինը առաջարկել են հետեւեալը.

1) Անձնային, ընտանեկան կոնֆլիկտներ եւ ընտանեկան բաժանում, հարազատի հիւանդութիւն, մեկնակութիւն, անյաջող սէր, վիրաւորւած ինքնասիրութիւն, մահ:

2) Առողջական վիճակ եւ տգեղութիւն, հոգեկան եւ սոմատիկ հիւանդութիւններ:

3) Կոնֆլիկտներ՝ կապւած հակասոցիալական վարքի հետ եւ վախ քրեական պատասխանատւութիւնից, վախ պատժից, ամօթի զգացում:

4) Կոնֆլիկտներ, որոնք կապւած են աշխատանքի կանուսման հետ եւ կոնֆլիկտներ աշխատանքում, անյաջողութիւններ ուսման մէջ:

5) Նիւթական, կենցաղային դժւարութիւններ:

Ի.Ա. Ալիեւը ինքնասպանութեան պատճառները բաժանում է երկու խմբի օբիեկտիւ եւ սուբիեկտիւ: Օբիեկտիւ խմբի մէջ մտնում են ինքնասպանութեան հասցնելը, հոգեկան հիւանդութիւնները, նիւթական անապահովածութիւնը, կրօնական ապրումները:

Սուբիեկտիւ պատճառներն են պատիժ կրելու վախը եւ ամօթը, հարբեցողութիւնը, թմրամոլութիւնը, միջսեռային ոլորտում տեղի ունեցող տարբեր անյաջողութիւններն ու կոնֆլիկտները, անյաջողութիւններն ուսման մէջ եւ աշխատանքում, հիասթափութիւնը, հարազատի կորուստը:



ԻՍՊԱՆԻԱՆ` ԱՆԽԱՐՀԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՀԱԻԱՔԱԿԱՆԸ

Արման Տ.Ստեփանյան

Յուլիսի 1-ին Կիեվի օլիմպիական մարզադաշտում աւարտուեց Եւրո 2012-ի եզրափակիչ մրցութիւնը: Որում անցեալ շրջանի եւ ինչպէս նաեւ աշխարհի առաջնութեան գաւաթի առաջատար Իսպանիան խաղում էր Իտալիայի հաւաքականի դիմաց: Այս երկու հաւաքականները հէնց այս մրցութիւններում գտնուում էին նոյն ենթախմբում: Նրանց նախկին խաղը աւարտուել էր 1-1 հաշուով: Դրա իսկ պատճառով եւ ինչպէս նաեւ ի նկատի ունենալով, որ կիսաեզրափակիչ փուլում Իտալիային յաջողւել էր պարտութեան մատնել ըստ մասնագէտների ամենաուժեղ հաւաքականին՝ Գերմանիային, բոլորը կանխատեսում էին, որ այս մրցութիւնը եւս կը լինի շատ դժուար եւ ծանր մրցութիւն: Սակայն հակառակ բոլոր հաշուարկների, Իսպանիայի ազգային հաւաքականը միանգամից շատ հզօր հանդէս եկաւ եւ 4-0 հաշուով ջախջախեց Իտալիային: Այսպիսով իսպանացիները եւս մէկ ան-

գամ փաստեցին թէ առայժմ համարում են աշխարհի լաւագոյն ֆուտբոլի ազգային հաւաքականը: Առաւել եւս այն, որ այսօր Իսպանիան աշխարհի միակ հաւաքականն է, որին յաջողւել է շահել 3 անընդմէջ մրցութիւնների գաւաթը՝ Եւրո 2008, աշխարհի առաջնութիւն եւ Եւրո 2012-ը:

Իսպանիայի ընտրանուց կրած

պարտութիւնից յետոյ, առաջինը լրագրողների հետ գրուցեց Սկուարա Ածուրայի դարպասապահ Ջանլուիջի Բուֆօնը: Վերջինս յուսով էր կրկնել լեգենդար դարպասապահ Դինօ Չոֆի յաջողութիւնը ու հռչակւել ինչպէս աշխարհի, այնպէս էլ՝ Եւրոպայի առաջնութիւնների յաղթող, բայց չհաջողւեց: «Ցաւօք, այսօր խաղ չստաց-



ԴԱԻԹ ԱՔՐԱՀԱՍՏԵԱՆԸ ԵՂԱՒ ՍՔՐՈՇԻ ՉԵՄՊԻՈՆ

Հայաստանում առաջին անգամ կայացել է սքւոշ մարզաձեւի առաջնութիւն, որտեղ 13-17 տարեկան տղաների խմբում առաջին տեղը զբաղեցրել է Դաւիթ Աբրահամեանը: Երկրորդ տեղը զբաղեցրել է Յովհաննէս Գրիգորեանը, երրորդը՝ Սիմոն Մանուկեանը: Յաղթող-



ները պարգևատրուել են մեդալներով, պատուգրերով: Սքւոշի հայկական ազգային ֆեդերացիան ստեղծել է 2011թ. Յուլիսին՝ սքւոշը Հայաստանում զարգացնելու եւ խթանելու նպատակով: Սքւոշի հայկական ազգային ֆեդերացիան հանդիսանում է Համաշխարհային Սքւոշի Ֆեդերացիայի (WSF) եւ Եւրոպայի Սքւոշի Ֆեդերացիայի (ESF) անդամ: Գերմանիան ներկայացնող հայ պորֆեսիոնալ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամի հորեղբոր որդին՝ Դաւիթ Աբրահամեանն ասում է, որ յաղթանակը մագնիսի պէս է, ձգում է: «Պատրաստում եմ յաջորդ առաջնութեանը, անշուշտ, ձգտում եմ յաղթանակի», - եզրափակեց Դաւիթ Աբրահամեանը:



ւեց: Իսպանացիները ակնյայտօրէն գերազանցում էին մեզ: Յետոյ մենք ֆուտբոլիստ կորցրինք: Ամէն դէպքում, մենք լաւ մասնակցեցինք առաջնութեանը: Հասկանալի է, որ եզրափակիչում անպայման ցանկանում ես յաղթել: Մենք ամէն ինչ տւեցինք յաղթանակի համար, սակայն կեանքում միշտ աւելի ուժեղին ես հանդիպում: Շնորհակալ եմ բոլոր նրանցից, ովքեր աջակցում էին մեզ այս մէկ ամսւայ ընթացքում»:


Իսկ Իսպանիայի հաւաքականի պաշտպան Ալլարո Արբեօլան խօսել է Իտալիայի հաւաքականի դէմ խաղից ստացած տպաւորութիւնների մասին: «Ես հպարտ եմ: Մենք հիանալի հանդիպում անցկացրեցինք մի թիմի հետ, ով մրցաշարում շատ լաւ էր դրսեւորել իրեն եւ արժանիօրէն յայտնւել էր եզրափակչում: Մեծ բաւականութիւն ստացայ

մրցաշարից: Իսկապէս, լաւ աշխատանք կատարեցինք եւ այժմ շատ ուրախ եմք: Ես յաղթանակը նւիրում եմ իմ ընտանիքին, որը միշտ աջակցում է ինձ: Առանց հարազատներիս



օգնութեան ես այստեղ չէի յայտնւի: Բացի այդ, նւիրում եմ յաղթանակը բոլոր նրանց, ովքեր երկրպագել են ինձ: Մենք ցանկանում ենք ապագայում էլ յաղթանակներ տանենք, չնայած հասկանում ենք, որ աւելի բարդ է լինելու: Բայց չենք ուզում կանգ առնել»:





ՀՈՐԻՁՈՆԱԿԱՆ

- 1-Հայ անւանի դասական երգչուհի:
- 2-Դիահերձական/օտար/ աւերիչ զէնք:
- 3-Կեանք պարզելող - ընտանի կենդանիների ուռուցքային հիւանդութիւն:
- 4-Թերի կոն... - Ու ողբացին.....դժխտն բախտը Հայաստանի/ Ա.Իսահակեան - կերած նուշ....
- 5-Շրթունքների կտրուածը - բաժին:
- 6-Մանելու սարք - վայրի կով - աւելորդ եւ նետելիք իրերի կոյտ, մնացորդ:
- 7-Հայկական լեռ - գաւազան -

- եկեղեցի:
- 8-Անշունչ մարմին - կովկասեան ազգութիւն - ժողովրդական աթոռ, մահճակալ:
- 9-Թերի մնացած - յորդուն:
- 10-Աջից՝ պինդ, անքակտելի - սաստիկ տաքանալը - ֆրանսիական մանր դրամ:
- 11-Այլ իմաստով՝ վերաբերմունք, բարք - ֆիլէ - տեղացի:
- 12-Երկրագործական աշխատանք - թէ ձեռքը ունի եւ թէ ծովը - ծագումով վայրենի ազգութիւն - խանգարած պար...
- 13-Հայ ժողովուրդը այս օրերին պիտի լինի այսպէս - ասում են

- Աստծունն է - խորշակ:
- 14-Այստեղ ծնեց հայ ժողովրդի փրկիչը - կտրեց Դաւիթ մարգարէի զլուխը:
- 15-Դիմելու անքաղաքավարի ձեւ - անքուն - աջից՝ իգական կոչում:

ՈՒՂՈՎՅԱՅԵԱՑ

- 1-Մարզ Յունաստանում, որի կենտրոնն է Սպարտան - ածական վառվռուն հայեացքի համար:
- 2-Ձեռք բերել, վաստակել - զարդարուն կտոր, որ սարկաւագները կրում են ձախ ուսին:
- 3-Աշակերտ - հայ տարաբախտ բանաստեղծ, որ զոհ զնաց թրքական սրին:
- 4-Եւրոպական հին ազգութիւն - արական անուն - միտք, գիտակցութիւն:
- 5-Նոր ծլած - հնագոյն երկիր:
- 6-Մետաղների երեսապատման եղանակ - փաթաթող բոյս, ոլոռ - խանգարած կապ...
- 7-Մէկ մէկու - խառնածին - թական միաւոր:
- 8-Թանկագին քար - մարդկանց հանրութիւն:
- 9-Հին վայրենի ազգութիւն - ուտելիք:
- 10-Տաք եղանակ- բարբառական վզի տակ աւելորդ միս - սփռած - ծայնանիշ:
- 11-Հայաստանի շրջաններից- ոչ լրիւ զգւած վուշ...- կտորից պատրաստած աման:
- 12-Երեք չափում ունեցող մեծութիւն /երկարութիւն, խորութիւն, բարձրութիւն/ - հեծնելու աթոռ - կոհակ:
- 13-Ասացւածք ֆուտբոլում - համաձայն - խոնաւ:
- 14-Պէս - առաւելագոյն սեր որելէ անձի կամ զբաղումի նկատմամբ:
- 15-Կաւից ամաններ պատրաստող վարպետ - իշու կամ ձիու քուռակ - մշուշ:

Անցեալ համարի պատասխանները

6	5	7	8	1	9	4	3	2
2	3	9	4	6	5	8	1	7
8	4	1	3	7	2	6	5	9
4	6	2	1	8	7	5	9	3
3	7	5	9	4	6	1	2	8
9	1	8	2	5	3	7	4	6
7	2	4	5	9	8	3	6	1
1	8	3	6	2	4	9	7	5
5	9	6	7	3	1	2	8	4

3	8	9	5	1	7	6	2	4
6	5	1	4	2	9	3	8	7
2	7	4	3	6	8	5	1	9
1	9	3	7	4	6	2	5	8
5	4	6	8	3	2	9	7	1
7	2	8	1	9	5	4	3	6
8	3	7	6	5	4	1	9	2
9	6	5	2	7	1	8	4	3
4	1	2	9	8	3	7	6	5

4	8	1	3	5	9	7	2	6
6	2	9	7	4	8	3	5	1
3	7	5	2	1	6	4	8	9
7	4	6	5	3	1	8	9	2
2	1	8	9	7	4	5	6	3
9	5	3	6	8	2	1	7	4
1	6	7	8	9	3	2	4	5
5	3	2	4	6	7	9	1	8
8	9	4	1	2	5	6	3	7


Շերամի ծաղ
կ աստղն է:

دوهفته نامه
اجتماعی فرهنگی

هفت روز



نگارگری ارمنی سده های میانه
تصویر سازی های
تزررون



آه طبیعت، آه مادر

صاحب امتیاز و مدیر مسؤول:
لئون آهاروتیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان در استپانیان

اشترک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین
ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وب سایت:

www.hoos.com

وب سایت فارسی:

http://farsi.hoos.com

پست الکترونیکی:

hoos@inbox.com

در این شماره

- ۲ در صفحات ارمنی این شماره
- ۴ قره‌باغ: انتخابات، مذاکره
تورج خسروی
- ۵ جاواخک و موضوع تابعیت دوگانه
واهاگن کشیشیان
- ۶ ابرهای خاطره: نخلستان
آلوارت طروسیان
- ۸ مینیاتور ارمنی سده‌های میانه: تصویرسازی‌های تزرون
- ۱۱ صفحاتی از کتاب سفر به آزارات
مایکل آرنل (پسر)

بخش ارمنی

- ۲ از تاریخ تئاتر جلفای اصفهان
نیکید میرزایان
- ۳ «کنگره ملی ارمنستان» از حزب «ارمنستان مرفه» حمایت می‌کند
نائیرا هایرومیان
- ۴ افکار عمومی ارمنستان خواهان محاکمه عادلانه عاملان قتل واها آودیان هستند
نائیرا هایرومیان
- ۶ نظرات سفیران پیشین ارمنستان درباره کتاب روزهای از زندگی طوفانی من
واهان بایبوردیان / گقام غریبجانیان

آه طبیعت، آه مادر

- ۸ کارمن آذریان
- ۱۰ اقبانوس‌ها سکوت می‌طلبند
- ۱۲ طرح مجلس ملی ارمنستان دریاچه سوان را نابود می‌کند

۱۴ درباره رمان آستانه‌ها نوشته گریگور پلیدیان

نوروان

۱۶ آستانه‌ها (بخشی از رمان)

گریگور پلیدیان

۱۸ گوناگون

۲۰ گل‌های رنگارنگ تصویرسازی آلمانی آلف هاپیک

۲۲ خودکشی: علت‌ها و شرایط

کامو وارتانیان

۲۴ ورزش

آرمان در استپانیان

گوشه‌هایی از آن چه در صفحات ارمنی این شماره هویس آمده است



طبیعت بر انسان خشم گرفته است

«در سال‌های اخیر خبرهای فجایع طبیعی و رخداد‌های غیرطبیعی روز به روز بیشتر می‌شود. از خبر تگرگ‌های درشت و نابهنگام گرفته تا تسونامی‌های وحشتناک تا خودکشی جمعی دلفین‌ها و کوسه‌ماهی‌ها. برآستی خبرهایی تکان‌دهنده و وحشت‌انگیز. طبیعت که میلیون‌ها سال چنان مادری مهربان انسان را در دامن خود پرورده و از او مراقبت کرده است، امروز گویی بر او خشم گرفته و بر سرش آتش می‌بارد. وقتی از نزدیک‌تر پژوهش‌های مربوط به زیست محیط را دنبال می‌کنیم، می‌بینیم که انسان بدون اینکه لحظه‌ای نگران آینده فرزندان خود و فرزندان و نوه‌ها و نیره‌های فرزندان خود باشد، به دست خویش کمر به نابودی طبیعی بسته است.

نیازی نیست متخصص باشیم تا دریابیم که انسان با از میان بردن جنگل‌ها و حوزه‌های آبی موجب گسترش بیابان‌ها و برخاستن طوفان‌های شن و گردوغباری می‌شود که بی‌محابا مرزهای بین کشورها در می‌نوردند. از یک سو بارندگی‌های سیل‌آسا زندگی و خان‌ومان مردمان و جانوران نابود می‌کند و در آن سو جنگل‌هایی که میلیون‌ها سال بالیده‌اند، طعمه حریق می‌شوند و می‌سوزند. بر این کره خاکی جایی نیست که از این ویرانی سهم نبرد. صخره‌های یخی عظیم قطب شروع به

ذوب شدن کرده‌اند و این امر به بالا آمدن سطح آب اقیانوس‌ها و زیر آب رفتن خشکی‌ها می‌انجامد. انواع نادر گیاهی و جانوری یکی پس از دیگری نابود می‌شوند.

به نظر می‌آید که انسان دوراندیش باید هرچه زودتر تدبیری برای توقف این روند ویرانگر بیاندیشد، اما گویی رجال سیاسی جز صدور بیانیه درباره خطرات سهمگینی که کره خاکی و نوع بشر را به نابودی تهدید می‌کنند کاری نمی‌کنند. پیدایش سازمان‌های حامی محیط زیست شاید در این میان نقطه‌امیدی باشد».

مقاله اصلی این شماره هویس به این مسائل خطیر اختصاص یافته است. در کنار مقاله کارمن آذربان که تکه‌هایی از آن را در بالا نقل کردیم، دو نوشته کوتاه داریم درباره دلایل خودکشی دسته‌جمعی دلفین‌ها و خطرات زیست‌محیطی‌ای که دریاچه سوان ارمنستان را تهدید می‌کنند.

اعتراضات گسترده به مرگ شهروند ارمنی به دست محافظان نماینده مجلس ارمنستان

۱۷ ژوئن (۲۸ خرداد) در رستوران و تالار پذیرایی هارستا کارایروان میان چند تن از مشتریان که بعدها معلوم شد همه از پزشکان نیروهای مسلح کشور بوده‌اند و ماموران امنیتی رستوران درگیری پیش

می‌آید. بنا به روایت مقامات رسمی، دلیل درگیری حضور این پزشکان با لباس نامناسب (گرمکن ورزشی) بوده است. به نوشته رسانه‌ها، بعد از این پیشامد، صاحب رستوران، روبن هاپراپتیان، که نماینده مجلس ملی جمهوری ارمنستان و رئیس فدراسیون ملی فوتبال کشور است، به محافظانش دستور می‌دهد تا درسی به مشتریان نافرمان بدهند. پنج پزشک به دست محافظان به شدت مضروب و به بیمارستان منتقل می‌شوند. یک تن از آن‌ها، واهه آودیان، به هوش نمی‌آید و چند روز بعد، روز ۲۹ ژوئن (۹ تیر) می‌میرد.

مرگ این پزشک سی‌وسه ساله که صاحب دو فرزند است گویی بهانه‌ای شده است برای فوران خشم فروخته مردم از بی‌قانونی و رفتار مستبدانه دولتمردان قدرتمند کشور. چند سال پیش محافظان روبرت کوچاریان در رستورانی مردی را که گویا با رئیس جمهور محترمانه صحبت نکرده بود به دستشویی رستوران بردند و آن قدر کتک زدند تا مُرد. اینک صدها تن از شهروندان ارمنی در خیابان‌های ایروان به حرکت درآمده‌اند تا خواهان برکناری روبن هاپراپتیان از نمایندگی مجلس، ریاست فدراسیون فوتبال و محاکمه او در دادگاه شوند. دو هزار نفر در نزدیکی رستوران هارستا کار در مراسم شمع‌افروزی به مناسبت مرگ این پزشک جوان شرکت کرده‌اند. در دست معترضان پلاکاردهایی بود که روی‌شان نوشته شده بود «من واهه آودیان هستم». داویت ساناساریان، از سازمان‌دهندگان حرکت اعتراضی علیه مرگ واهه آودیان گفته است: «مرگ واهه برای همه ما چالشی است که به زندگی در بردگی ادامه دهیم یا به پا خیزیم و بگوییم چنین چیزی دیگر تکرار نخواهد شد». این سخنان نشان می‌دهند که مسئله فراتر از یک پیشامد تصادفی است و جان مردم از بی‌قانونی سیاستمداران و محافظان‌شان به لب رسیده است. احزاب سیاسی گوناگون با دیدگاه‌های بسیار مختلف، از «کنگره ملی» و «میراث» گرفته تا «دانشکوتیون»، این واقعه را محکوم کرده و خواهان محاکمه و مجازات عاملان و آمران آن شده‌اند.

روز ۳ ژوئیه (۱۳ تیر) روبن هاپراپتیان از نمایندگی مجلس استعفا داد. او پیش از این اقدام با رئیس جمهور سرژ سرکیسیان مشاورت کرده بود. در



۲۶ ژوئن حکایت از این می‌کند که کنگره قصد دارد از حزب «ارمنستان مرفه» به رهبری گاگیگ زاروکیان حمایت کند. تر پطروسیان به انتقاد از کسانی پرداخت که اصرار دارند «ارمنستان مرفه» اپوزیسیون واقعی نیست و به مثابه آلترناتیو دروغین حزب جمهوریخواه عمل می‌کند. گفتنی است که ارمنستان مرفه شریک اصلی سرژ سرکیسیان در حکومت بوده است. اما تر پطروسیان معتقد است که این حزب در انتخابات نشان داد که اپوزیسیون واقعی است. او این حرف را که در پشت زاروکیان روبرت کوچاریان ایستاده است بی‌اساس خواند و گفت که هدف از این حرف این است که با علم کردن خطر کوچاریان، سرژ سرکیسیان را به عنوان گزینه ممکن از میان بد و بدتر به مردم تحمیل کنند.



با توجه به این سخنان می‌توان گفت که کنگره ملی به هر بهایی خواهان همراهی با حزب «ارمنستان مرفه» است. اگر چنین اتحادی برای شرکت در مبارزات ریاست جمهوری آینده شکل بگیرد، کاندیدای احتمالی آن وارطان اُسکانیان، وزیر امور خارجه کوچاریان و رئیس بنیاد سیویلیناس خواهد بود که به تازگی به حزب «ارمنستان مرفه» پیوسته است. چنین اتحادی با چنین نامزدی شانس بسیار بالایی برای پیروزی در انتخابات ریاست جمهوری سال آینده خواهد داشت. به همین سبب فشارها بر اُسکانیان فزونی گرفته و در هفته‌های گذشته با اتهام پولشویی به دادگاه فرا خوانده شد.

بزرگداشت گریگور پلیدیان، نویسنده فرانسوی-ارمنی، در گلندل کالیفرنیا

یکی دو ماه پیش، گریگور پلیدیان، نویسنده ارمنی مقیم فرانسه، که تاکنون چندین رمان، مجموعه نقد ادبی و دفتر شعر به زبان ارمنی منتشر کرده است، مهمان ارامنه گلندل بود. انجمن دوستان کرسی زبان و ادبیات ارمنی در دانشگاه UCLA با اعطای مدال گریگور ناکاتسی به این نویسنده توانا از یک عمر فعالیت ادبی او قدردانی کرد. دغدغه پلیدیان در رمان‌هایش بازسازی زندگی فناشده محلات ارمنی‌نشین خاورمیانه است. بدین معنا او به آن دسته از نویسندگانی تعلق دارد که زندگی مهاجران و دوفرهنگی‌ها در کانون

اطلاعهایی که او به این مناسبت منتشر کرده آمده است: «همه چیزم را می‌دادم اگر می‌شد در آن شب شوم آنجا بودم، مانع این مصیبت می‌شدم، جلوی مشت‌هایی را که زندگی جوانی را گرفتند، خانواده‌ای را به عزا نشانندند و کودکانی را یتیم کردند بگیرم. همه چیزم را می‌دادم اگر می‌توانستم سیر وقایع را به عقب برگردانم. اما افسوس که این کار ممکن نیست. واهه دیگر نیست. و من باید با این واقعیت تلخ زندگی کنم. باید به چشم اعضای خانواده‌اش نگاه کنم. و نمی‌دانم چگونه می‌توانم این کار را بکنم. می‌گویند همه مسببان باید مطابق قانون محاکمه شوند. اطمینان دارم همین طور خواهد بود. اگر صد نفر مقصر باشند، هر صد نفر محاکمه خواهند شد».

لحن بیانیه از قصد هیئت حاکمه برای دلجویی از بازماندگان قربانی حادثه حکایت می‌کند. در عین حال روین‌هایرپتپیان اعلام می‌کند که در زمان وقوع حادثه در رستوران حضور نداشته است. اعتراضات گسترده به ضرب و شتم آودیان و مرگ او جزئی از حرکت مدنی رو به گسترشی است که خواهان محدود کردن قدرت الیگارشسی سیاسی-مالی حاکم بر کشور است.

صف آرایی جدید در صحنه سیاسی ارمنستان

سخنرانی لئون تر پطروسیان رهبر «کنگره ملی ارمنستان» در آخرین گردهمایی این حزب در

توجهشان جای دارد. در این شماره هویس، نوروان، شاعر ایرانی-ارمنی مقاله‌ای نوشته است درباره یکی از رمان‌های پلیدیان: «آستانه‌ها». آستانه در نام این رمان اشاره دارد به عکس‌هایی که به مثابه آستانه‌های ورود به زندگی‌های از میان رفته عمل می‌کنند. پلیدیان از هر عکس پلی می‌سازد برای ورود به زندگی‌هایی که دیگر چیزی از آن‌ها به جای نمانده است مگر یادهایی محو و عکس‌هایی. «بخش بزرگی از عکس‌ها مولف ندارند. از قدیمی‌ترین آن‌ها تا جدیدترین‌شان فاقد امضا هستند. تعدادی از آن‌ها کارهای عکاسان بی‌نام محله‌ها هستند، اما تعدادی دیگر از آن‌ها باید کار سِدو باشند، سِدو امین، که با دستگاه کهنه عهد عتیقش از همولایتی‌هایش که از روستاها به شهر می‌آمدند عکس می‌گرفت. البته شاید او تنها عکاسی نبوده است که این عکس‌ها را گرفته، اما نمی‌توانم منکر شوم که در این عکس‌ها یک جور سبک وجود دارد. در آرایش چهره‌ها جلوی عدسی، مشاهده ریزه‌کاری‌ها و نور انداختن بر آن‌ها، با هم در رابطه قرار دادن اشیایی که در میدان دید قرار دارند به نحوی که بر یک نوع تفکر عکاسی گواهی می‌دهند، لایه‌های زیرین یک لهجه بامزه شهرستانی. یک هنرمند؟ خودش به این حرف می‌خندید...»
جملاتی چند از مقدمه رمان *آستانه‌ها* نوشته گریگور پلیدیان.

قره باغ: انتخابات، مذاکره

تورج خسروی

پاریس؛ میزبان میانجی گران مناقشه قره باغ

رؤسای گروه مینسک سازمان امنیت و همکاری اروپا این بار در تاریخ ۲۹ خرداد سال جاری به همراه ادوارد نعلبندیان و المار ممدیاروف، وزیر امور خارجه ارمنستان و آذربایجان، راهی پاریس شدند تا در مورد مناقشه قره باغ به بحث و گفت و گو بنشینند. بر طبق گزارش سایت وزارت امور خارجه ارمنستان، آن‌ها در این دیدار اقدامات انجام شده در روند حل بحران قره باغ، گسترش ارتباطات انسان دوستانه، حفظ ارزش‌های تاریخی و



فرهنگی و ایجاد مکانیزمی برای پیگیری بررسی نقض آتش بس را مورد بررسی قرار داده‌اند. میانجی گران بین المللی نگرانی عمیق خود را نسبت به آخرین وقایع خط تماس نیروهای ارمنی و آذربایجانی اعلام و بر اهمیت احترام به قرارداد آتش بس سال ۱۹۹۴ تأکید کرده‌اند. وزیر امور خارجه دو کشور نیز اعلام کردند مذاکرات برای برقراری صلح و تحکیم اعتماد، در چهارچوب گروه مینسک ادامه خواهد داشت.

سران کشورهای رؤسای گروه مینسک (آمریکا، روسیه و فرانسه) طی ملاقات «جی-۲۰» در شهر لس کابوس مکزیک با صدور اعلامیه مشترک خود گفته‌اند: «ما افسوس می خوریم که رؤسای جمهور ارمنستان و آذربایجان در جهت پیشنهادات قاطعانه ما در اعلامیه مشترک ۶ خرداد ۱۳۹۰ در دوویل، گام برنداشته‌اند».

لازم به ذکر است که این بیانیه چهارمین بیانیه رؤسای جمهور کشورهای عضو گروه مینسک پیرامون مناقشه قره باغ کوهستانی است. سه بیانیه‌ی دیگر عبارت‌اند از: بیانیه آکویلا، مسکو و دوویل.

آشکار است پیشنهاد حفظ آتش بس برای طرفین اهمیت حیاتی دارد، اما چشم‌اندازی هم برای حل مناقشه دیده نمی‌شود به همین خاطر قرارداد آتش بس به راحتی نقض می‌شود، اما جنگی هم

برگزاری پنجمین دوره انتخابات ریاست جمهوری در قره باغ

در تاریخ ۱۹ ژوئن (۳۰ خرداد) ۲۰۰۷ برگزار شده است.

برخی از احزاب سیاسی قره باغ از باگو ساهاکیان حمایت کرده‌اند از جمله حزب دانشناکسوتیون آرتساخ. اما این حزب در عوض حمایت خود از رئیس جمهور کنونی قره باغ خواسته است و نیز به اصول ذیل پای بند باشد.

۱. بر طبق قانون اساسی این جمهوری، در روند حل مسأله قره باغ به هیچ عنوان رویکردی مصالحه جویانه نشان ندهد.

۲. بررسی مسائل مرتبط با امور ملی و نظامی باید با حضور تمامی قدرت‌های سیاسی فعال در

صورت نمی‌گیرد چون نه طرفین، نه کشورهای منطقه و نه گروه مینسک خواهان آن نیستند. برخی از کارشناسان بر این باورند که حل نشدن مناقشه قره باغ به نفع الهام علی‌یف است و خود وی نیز همین مسأله را برای تداوم حکومت استبدادی نیاز دارد. زیرا باعث می‌شود مردم را به بهانه آزادسازی قره باغ متحد نگه دارد و باعث تفرقه و اختلاف بیشتر میان آذری‌ها نشود. حل شدن این مناقشه این بهانه را از وی خواهد گرفت، و اعتراضات مردمی نسبت به شیوه حکومتی وی بیشتر خواهد شد.



جمهوری قره باغ کوهستانی انجام شود. ۳. با الویت قرار دادن قانون، از رویکردهای تبعیض آمیز سیاسی و اقتصادی جلوگیری کند. بنا به گزارش برخی از مطبوعات ارمنی رقابت اصلی در انتخابات پیش رو، میان ویتالی بالاسانیان و باگو ساهاکیان خواهد بود و به نظر می‌رسد که شانس برنده شدن رئیس جمهور فعلی با توجه به حمایت احزاب و انجمن‌ها مختلف قره باغ از وی، بیشتر است.

